ԱՄ 032-14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«09» հոկտեմբերի 2014թ. N 111-Հ/1

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԲԺԻՇԿ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ, ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆ-ՕՐԹՈՊԵԴ /ՎԻՐԱԲՈՒՅԺ/ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ /ԷՐԳՈԹԵՐԱՊԻՍՏ/ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6.1-րդ հոդվածի «գ» կետը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1821-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի N 1822-Ն որոշմամբ հաստատված N 1 հավելվածի 7-րդ կետի «ա» և 8-րդ կետի «ե» ենթակետերով սահմանված պահանջները, նպատակ ունենալով առավելագույնս կանոնակարգել հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի կազմման, դրանց իրականացման ու արդյունավետության գնահատման հետ կապված հարաբերությունները և էապես բարձրացնել հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի իրականացման արդյունավետությունը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝
   1) Հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի կազմման, վերականգնողական անհատական ծրագրում ընդգրկված

վերականգնողական միջոցառումների իրականացման և իրականացմանն աջակցության կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության բժիշկ-վերականգնողաբան մասնագետի պաշտոնի բնութագիրը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության վնասվածքաբան-օրթոպեդ /վիրաբույժ/ մասնագետի պաշտոնի բնութագիրը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության վերականգնողաբան /էրգոթերապիստ/ մասնագետի պաշտոնի բնութագիրը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո տասնհինգօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին ներկայացնել բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության պետին ներկայացվող եռամսյակային և տարեկան հաշվետվությունների ձևը և դրանց ներկայացման կարգը հաստատելու մասին հրամանի նախագիծը:

3. «Նորք» տեղեկատվավերլուծական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն Վ. Աբազյանին՝ մինչև 2014 թվականի դեկտեմբերի 1-ը ապահովել սույն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված հավելվածով սահմանված՝ վերականգնողական անհատական ծրագրի էլեկտրոնային եղանակով վարման, տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության ինքնաշխատ փոխանակությունն իրականացնող ծրագրային գործիքների ներդրման և դրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ համակարգչային և ցանցային տեխնիկայի շահագործման աշխատանքների իրականացումը:

4. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ՝ Ջ. Բաղդասարյանին:

Ա. ԱՍԱՏՐՅԱՆ

Հավելված N 1
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 9-ի N 111 - Ա/1 հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են հաշմանդամություն ունեցող անձի և «հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխայի (այսուհետ նաև՝ հաշմանդամություն ունեցող անձ) վերականգնողական անհատական ծրագրի (այսուհետ նաև՝ ՎԱԾ) կազմման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության, Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների և համայնքների՝ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունների տարածքային բաժինների կողմից (և/կամ միջոցով) ՎԱԾ-ում ընդգրկված վերականգնողական միջոցառումների իրականացման և դրանց իրականացմանն աջակցության, ինչպես նաև ՎԱԾ-ում ընդգրկված վերականգնողական միջոցառումների արդյունավետության գնահատման հետ կապված հարաբերությունները:

2. ՎԱԾ-ի կազմման և դրանում ընդգրկված վերականգնողական միջոցառումների իրականացման և դրանց իրականացմանն աջակցելու նպատակը հաշմանդամություն ունեցող անձի վերականգնումն է, իսկ ՎԱԾ-ում ընդգրկված վերականգնողական միջոցառումների արդյունավետության գնահատման նպատակը՝ այդ միջոցառումները սահմանելիս ակնկալվող արդյունքների և վերականգնողական միջոցառումների իրականացման փաստացի արդյունքների համադրումը, հաշմանդամություն ունեցող անձի վերականգնմանը խոչընդոտող խնդիրների բացահայտումը, դրանց բացասական ներգործության հետևանքների կանխումը կամ նվազեցումը, հաշմանդամություն ունեցող անձի առողջության, աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության և սոցիալական կարգավիճակի վերականգնման դրական զարգացումների արդյունավետ օգտագործումը:

II. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

3. ՎԱԾ-ը սահմանված որոշակի վավերապայմաններով և ձևով, լրացման համար անհրաժեշտ դաշտեր պարունակող փաստաթուղթ է, որի համաձայն իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնումը:

4. ՎԱԾ-ում ներառվում են հաշմանդամություն ունեցող անձի նույնականացման, բնակության վայրի, կրթության, մասնագիտության, հաշմանդամության խմբի (կամ <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակի) վերաբերյալ անհրաժեշտ տվյալներ, հիվանդությունների միջազգային 10-րդ դասակարգմամբ ներկայացված ախտորոշումը, ինչպես նաև տեղեկություններ հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական միջոցառումների տեսակների և ժամկետների, դրանց կատարողների, վերականգնողական միջոցառումներում իրականացվող փոփոխությունների և լրացումների, վերականգնողական միջոցառումների կատարման արդյունքների և ՎԱԾ-ի իրականացման վերաբերյալ: ՎԱԾ-ում լրացվում են նաև այլ տեղեկություններ՝ սույն կարգի և ՎԱԾ-ի ձևին ու բովանդակությանը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին համապատասխան: ՎԱԾ-ի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով:

5. ՎԱԾ-ը ներառում է բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրեր, որոնցում համապատասխանաբար սահմանված են հաշմանդամություն ունեցող անձի վերականգնման համար նախատեսված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման միջոցառումները:

1. ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

6. Բժշկական վերականգնման ծրագիրը տարբեր հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական, մտավոր և այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգ է:

7. Բժշկական վերականգնման ծրագիրը կազմվում է հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելու, հաշմանդամություն ունեցող անձի օրգանիզմի խանգարված կամ կորսված ֆունկցիաները և առողջությունը վերականգնելու նպատակով:

8. Բժշկական վերականգնման ծրագրում, ըստ անհրաժեշտության, ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 28-ի N 1067-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածով սահմանված բժշկական վերականգնման միջացառումները, ինչպես նաև վերականգնողական բուժում, վերակառուցողական (վերականգնողական) վիրաբուժություն, պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող այլ միջոցառումներ՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձի կարիքները, իսկ առաջին անգամ հաշմանդամ ճանաչված անձանց համար՝ նաև առողջապահական կազմակերպության կողմից բժշկասոցիալական փորձաքննության ուղեգրում նշված բժշկական վերականգնման նպատակով առաջարկված միջոցառումները:

2. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

9. Մասնագիտական վերականգնման ծրագիրը հաշմանդամություն ունեցող անձի մասնագիտական կողմնորոշմանը, մասնագիտական կրթությանը, մասնագիտական ուսուցմանը (որակավորման բարձրացմանը, վերամասնագիտացմանը, նախնական մասնագիտական պատրաստմանը, արհեստագործական ուսուցմանը), մասնագիտական հարմարվողականությանը և հարմար աշխատանքի տեղավորման գործընթացին ուղղված միջոցառումների համակարգ է:

10. Մասնագիտական վերականգնման ծրագիրը կազմվում է հաշմանդամություն ունեցող անձանց կորցրած կամ նվազած մասնագիտական ունակությունների լրիվ կամ մասնակի վերականգնման, մասնագիտական հմտություններն օգտագործելու կամ նոր մասնագիտական հմտություններ ձեռք բերելու կարողությունների զարգացման, նախկին կամ նոր մասնագիտությամբ աշխատանքային գործունեություն իրականացնելու համար մատչելի պայմանների ստեղծման նպատակով:

3. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳԻՐ

11. Սոցիալական վերականգնման ծրագիրը սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-իրավական և օրենքով չարգելված այլ միջոցառումների համակարգ է, որում ներառվում են սոցիալ-կենցաղային հարմարեցումը, սոցիալ-միջավայրային կողմնորոշումը (հարմարեցումը), ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական վերականգնման այլ ձևեր: Սոցիալական վերականգնման ծրագիրն ուղղված է սույն կարգի 12-րդ կետով նախանշված նպատակների իրականացմանը:

12. Սոցիալական վերականգնման ծրագիրը կազմվում է հաշմանդամություն ունեցող անձի համար հասարակական կյանքի բոլոր բնագավառներում այլ անձանց հավասար հնարավորությունների ստեղծման, հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական, ինչպես նաև ինքնուրույն ապրելու հմտությունների վերականգնման և հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական ներառմանը նպաստելու նպատակով:

III. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՈՒՄԸ, ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ԿԱԶՄԵԼԻՍ ԴՐԱՆՈՒՄ ԼՐԱՑՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

13. ՎԱԾ-ը կազմվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի (այսուհետ՝ Նախարարություն) Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն)՝

1) բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների (այսուհետ՝ ԲՍՓՀ) կողմից՝

ա. անձին որպես հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու դեպքում,

բ. ՎԱԾ չունեցող, անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների համար՝ այդպիսի անհրաժեշտություն առաջանալու պարագայում,

գ. անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների համար, սույն կարգի 16-րդ կետով սահմանված՝ ՎԱԾ-ի իրականացման ժամկետի ավարտից հետո, այդպիսի անհրաժեշտության առկայության դեպքում.

2) վերափորձաքննության բաժնի կողմից՝

ա. ԲՍՓՀ-ի կողմից կայացված բժշկասոցիալական փորձաքննական որոշումների վերադասության կարգով վերանայման արդյունքում անձին որպես հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու դեպքում,

բ. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

14. ՎԱԾ-ը կազմվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում՝ սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

15. ՎԱԾ-ը կազմվում է՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձի օրգանիզմի կառուցվածքային առանձնահատկությունները, ֆունկցիայի խանգարման տեսակը (տեսակները) և աստիճանը (աստիճանները), կենսագործունեության սահմանափակման տեսակը (տեսակները) և աստիճանը (աստիճանները), վերականգնողական ներուժի գնահատումը, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-կենցաղային, մասնագիտական-աշխատանքային, միջավայրային և այլ գործոնները, կլինիկական ու վերականգնողական կանխատեսումները, ինչպես նաև վերականգնմանն ուղղված այնպիսի միջոցառումների ընդգրկման անհրաժեշտությունը, որոնք առավելապես կնպաստեն հաշմանդամություն ունեցող անձի ֆիզիկական, մտավոր, մասնագիտական ունակությունների և կարողությունների զարգացմանը և(կամ) պահպանմանը, սոցիալական ներառմանը:

16. ՎԱԾ-ը կազմվում է ըստ հաշմանդամության սահմանման ժամկետի՝ մեկ կամ երկու տարի ժամկետով կամ անժամկետ, իսկ <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակ ունեցող երեխայի ՎԱԾ-ը՝ երկու տարի ժամկետով կամ մինչև երեխայի 18 տարին լրանալը:

17. ՎԱԾ-ը ԲՍՓՀ-ի կողմից կազմելու ընթացքում դրանում ընդգրկվող վերականգնողական միջոցառումների ծավալի, բովանդակության, ժամկետների վերաբերյալ ԲՍՓՀ-ի որևէ բժիշկ-փորձագետի լրիվ կամ մասնակի անհամաձայնության դեպքում, ԲՍՓՀ-ի տվյալ բժիշկ-փորձագետը մեկ աշխատանքային օրվա ընթացքում ԲՍՓՀ-ի նախագահին է ներկայացնում ՎԱԾ-ում ընդգրկվելիք վերականգնողական միջոցառումների վերաբերյալ իր հատուկ կարծիքը: ԲՍՓՀ-ի նախագահը, ՎԱԾ-ում ընդգրկվելիք վերականգնողական միջոցառումների վերաբերյալ ԲՍՓՀ-ի բժիշկ-փորձագետի հատուկ կարծիքը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ՎԱԾ-ը հաշմանդամություն ունեցող անձին հանձնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը, սույն կետում նշված հատուկ կարծիքում ներկայացված առարկությունների և հիմնավորումների շրջանակներում, ԲՍՓՀ-ի բժիշկ-փորձագետների հետ իրականացնում է քննարկում՝ ՎԱԾ-ում ներառման ենթակա համապատասխան վերականգնողական միջոցառումների վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով:

18. ՎԱԾ-ը Գործակալության վերափորձաքննության բաժնի կողմից կազմելու ընթացքում դրանում ընդգրկվող վերականգնողական միջոցառումների ծավալի, բովանդակության, ժամկետների վերաբերյալ վերափորձաքննության բաժնի գլխավոր մասնագետներից որևէ մեկի լրիվ կամ մասնակի անհամաձայնության դեպքում,

վերափորձաքննության բաժնի տվյալ աշխատողը մեկ աշխատանքային օրվա ընթացքում բաժնի պետին է ներկայացնում ՎԱԾ-ում ընդգրկվելիք վերականգնողական միջոցառումների վերաբերյալ իր հատուկ կարծիքը: Վերափորձաքննության բաժնի պետը, ՎԱԾ-ում ընդգրկվելիք վերականգնողական միջոցառումների վերաբերյալ հատուկ կարծիքը ստանալուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան ՎԱԾ-ը հաշմանդամություն ունեցող անձին հանձնելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը, սույն կետում նշված հատուկ կարծիքում ներկայացված առարկությունների և հիմնավորումների շրջանակներում, վերափորձաքննության բաժնի աշխատողների հետ իրականացնում է քննարկում՝ ՎԱԾ-ում ներառման ենթակա համապատասխան վերականգնողական միջոցառումների վերաբերյալ որոշում ընդունելու նպատակով:

19. Հաշմանդամություն ունեցող անձին կամ նրա ներկայացուցչին ՎԱԾ-ը առձեռն հանձնելիս, ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության համապատասխան տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների (ԲՍՓՀ-ի և վերափորձաքննության բաժնի) կողմից բանավոր պարզաբանվում են ՎԱԾ-ի նպատակը, ՎԱԾ-ը հաշմանդամություն ունեցող անձի հայեցողությամբ իրականացնելու իրավունքը, ՎԱԾ-ում ընդգրկված վերականգնողական միջոցառումների իրականացման արդյունքում ակնկալվող արդյունքները, ՎԱԾ-ի վերանայման հիմքերը և կարգը: Համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) միասնական ընդունարանների միջոցով ՎԱԾ-ն առձեռն հանձնելու դեպքում, ՎԱԾ-ի վերաբերյալ սույն կետով սահմանված պարզաբանումները (խորհրդատվությունները) տրամադրվում են ՀՍԾՏԿ-ի միասնական ընդունարանների՝ համապատասխան լիազորություններով օժտված աշխատողի (բուժվիճակագրի) կողմից:

20. ՎԱԾ-ը կազմվում է ինչպես փաստաթղթային՝ թղթային կրիչով, այնպես էլ էլեկտրոնային եղանակով: Թղթային կրիչով ՎԱԾ-ը կազմելուց հետո եռօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում հանձնվում է հաշմանդամություն ունեցող անձին կամ նրա ներկայացուցչին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող տվյալ անձի սպասարկման տարածքում գտնվող ՀՍԾՏԿ-ին: Էլեկտրոնային եղանակով ՎԱԾ-ը կազմվում է ՎԱԾ-ի համար նախատեսված անհրաժեշտ տվյալները և տեղեկությունները հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարան մուտքագրելու միջոցով՝ ոչ ուշ, քան ՎԱԾ-ի թղթային կրիչի կազմման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը: Էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ը և դրանում ներառված առանձին ծրագրերի, դրանց կատարման վերաբերյալ տեղեկատվությունը սույն կարգով սահմանված դեպքերում և պայմաններով ուղարկվում և (կամ) առցանց կերպով հասանելի է լինում Նախարարության համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների աշխատակազմերի սոցիալական ծառայությունների տարածքային գործակալությունների և համայնքների՝ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակազմերի առանձնացված ստորաբաժանումներ հանդիսացող սոցիալական ծառայությունների տարածքային բաժիններին (այսուհետ՝ սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանում), սոցիալական աշխատանքի մասնագետներին (այսուհետ՝ սոցիալական աշխատող), պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնողական տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ տրամադրող կազմակերպություններին: Ընդ

որում, միևնույն ՎԱԾ-ի՝ թղթային կրիչով և էլեկտրոնային եղանակներով կազմած օրինակներում ներառված տվյալները և տեղեկություններն ամբողջությամբ պետք է համապատասխանեն միմյանց, բացառությամբ ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկություններն արտացոլող այն հատվածի, որը բժշկական վերականգնում իրականացնող համապատասխան մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից լրացվում է միայն ՎԱԾ-ի՝ թղթային կրիչով կազմած օրինակում, ինչպես նաև սույն կարգով սահմանված այլ դեպքերի:

21. ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագրի՝

1) «Վերականգնողական միջոցառումների տեսակները» սյունակում ընդգծվում է (ընդգծվում են) հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված համապատասխան վերականգնողական միջոցառումը (միջոցառումները),

2) «Կատարողը» սյունակի համապատասխան տողերում լրացվում են հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված բժշկական վերականգնման յուրաքանչյուր միջոցառման իրականացման ձևը (հիվանդանոցային, ամբուլատոր կամ առողջարանային), բժշկական վերականգնման յուրաքանչյուր միջոցառումն իրականացնող մարմնի (կազմակերպության, հիմնարկի) տեսակը (առողջապահական, վերականգնողական կազմակերպություններ, բժշկական-վերականգնողական կենտրոններ և այլն),

3) «Կատարման ժամկետը» սյունակի համապատասխան տողերում լրացվում են հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված բժշկական վերականգնման յուրաքանչյուր միջոցառման նախընտրելի սկիզբը և ավարտը կամ տևողությունը՝ ելնելով հաշմանդամություն ունեցող անձի առողջական վիճակի առանձնահատկություններից,

4) փոփոխություններին և լրացումներին վերաբերող սյունակում տեղեկությունները լրացվում են ՎԱԾ-ի իրականացման ընթացքում՝ ըստ անհրաժեշտության, հաշվի առնելով սույն կարգի 91-րդ և 92-րդ կետերով սահմանված պահանջները:

22. Անհրաժեշտության դեպքում, բժշկական վերականգնման ծրագրում անհրաժեշտ միջոցառումների ընդգրկման հարցերում ԲՍՓՀ-ին և Գործակալության վերափորձաքննության բաժնին մասնագիտական օժանդակություն կարող է ցուցաբերել սույն կարգի 93-րդ կետում նշված բուժատեխնիկական հանձնաժողովը՝ ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնի կամ ԲՍՓՀ-ի գրավոր հարցման դեպքում՝ սույն կարգի 96-րդ կետով սահմանված կարգով և ժամկետներում:

23. ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագրի՝

1) «Վերականգնողական միջոցառումների տեսակները» սյունակում, հաշմանդամություն ունեցող տվյալ անձին մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն տրամադրելու, մասնագիտական ուսուցում իրականացնելու կամ հաշմանդամություն ունեցող տվյալ անձի վերամասնագիտացման անհրաժեշտության դեպքում, ընդգծվում է մասնագիտական վերականգնման համապատասխան միջոցառումը,

2) «Վերականգնողական միջոցառումների տեսակները» սյունակում, ընդգծվում է աշխատանքային երաշխավորագրին և աշխատանքի բնույթի ցուցվածությանը և հակացուցվածությանը, աշխատանքի պայմաններին և ծավալին վերաբերող մասը, եթե առկա է հաշմանդամություն ունեցող տվյալ անձի կողմից առողջական վիճակի բերումով որոշակի աշխատանքներ կատարելու ցուցվածության կամ հակացուցվածության

վերաբերյալ սույն կետի 4-րդ ենթակետով սահմանված որևէ տեղեկատվություն լրացնելու անհրաժեշտություն,

3) <<Եզրակացությունը>> սյունակի համապատասխան տողերում լրացվում են՝

ա. հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված մասնագիտական վերականգնման յուրաքանչյուր միջոցառման վերաբերյալ եզրակացությունը,

բ. որոշակի մասնագիտությամբ (մասնագիտություններով) ուսուցանելու, վերապատրաստվելու ցուցվածությունը և (կամ) հակացուցվածությունը, ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ հատուկ պահանջները՝ ուսումնական գործընթացի կազմակերպման ձևը (առկա, հեռակա, տնային, անհրաժեշտության դեպքում նաև՝ բժշկական հաստատությունում), վերականգնողական տեխնիկական՝ սուրդոտեխնիկական, տիֆլոտեխնիկական միջոցների, թարգմանիչի անհրաժեշտությունը, եթե «Վերականգնողական միջոցառումների տեսակները» սյունակում ընդգծվել է մասնագիտական ուսուցում կամ վերամասնագիտացում նախատեսող միջոցառումը,

4) <<Եզրակացությունը>> սյունակում, <<Վերականգնողական միջոցառումների տեսակները» սյունակի աշխատանքային երաշխավորագրին և աշխատանքի բնույթի ցուցվածությանը և հակացուցվածությանը, աշխատանքի պայմաններին և ծավալին վերաբերող մասին համապատասխանող տողերում, լրացվում են՝

ա. հաշմանդամություն ունեցող տվյալ անձի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության և ինքնասպասարկման ապահովման ունակության սահմանափակման աստիճանը (այդ թվում՝ ուղեկցողի անհրաժեշտությունը),

բ. հաշմանդամություն ունեցող տվյալ անձի կողմից որոշակի աշխատանքներ կատարելու կամ որոշակի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը (սահմանափակման աստիճանը), իսկ մասնագիտական կրթություն և որակավորում ունենալու դեպքում՝ նաև իր մասնագիտությամբ և որակավորմամբ աշխատելու կարողությունը կամ սահմանափակումը (սահմանափակման աստիճանը),

գ. հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար թույլատրելի աշխատանքների բնույթը (ֆիզիկական, մտավոր, վարչակազմակերպական, ստեղծագործական և այլն),

դ. հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար աշխատաժամանակի թույլատրելի տևողությունը (նորմալ կամ կրճատ կամ ոչ լրիվ),

ե. աշխատանքի այնպիսի պայմանները (և/կամ ծավալները), որոնք առողջական վիճակի բերումով հակացուցված են հաշմանդամություն ունեցող տվյալ անձին,

զ. աշխատանքային այնպիսի գործառույթները, որոնք առողջական վիճակի բերումով հակացուցված են հաշմանդամություն ունեցող տվյալ անձին,

է. աշխատավայր հասնելու համար նախընտրելի տրանսպորտային միջոցների տեսակը,

ը. ըստ անհրաժեշտության՝ աշխատանքների ցուցվածության և հակացուցվածության մասին այլ տեղեկություններ, որոնք կարող են կարևորվել մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման համար,

5) <<Կատարողը և ժամկետը>> սյունակում լրացվում է՝

ա. Նախարարության զբաղվածության պետական գործակալության համապատասխան տարածքային կենտրոնի անվանումը, իսկ այն դեպքում, երբ

հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված մասնագիտական վերականգնման միջոցառումն իրականացվելու է մասնագիտական վերականգնման օգնություն տրամադրող այլ մարմնի (կազմակերպության, հիմնարկի) կողմից, ապա դրա տեսակը (ուսումնական հաստատություն, կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման գործառույթներ իրականացնող կազմակերպություն, մասնագիտական կողմնորոշման կենտրոն և այլն),

բ. մասնագիտական վերականգնման յուրաքանչյուր միջոցառման նախընտրելի սկիզբը և ավարտը կամ տևողությունը՝ հաշվի առնելով նաև մասնագիտական վերականգնման միջոցառման իրականացման համար անհրաժեշտ զբաղվածության պետական համապատասխան ծրագրի իրականացման ժամկետները:

24. ՎԱԾ-ում ներառված սոցիալական վերականգնման ծրագրի համապատասխան սյունակներում ընդգծվում են սույն կարգի 12-րդ կետով սահմանված նպատակների իրականացմանը միտված՝ սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումները, նշվում են հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված սոցիալական վերականգնման յուրաքանչյուր միջոցառումն իրականացնող կամ դրա իրականացումը կազմակերպող անձանց (մարմնի, կազմակերպության, հիմնարկի) մասին տեղեկություններ, սոցիալական վերականգնման յուրաքանչյուր միջոցառման նախընտրելի սկիզբը և ավարտը կամ տևողությունը՝ ելնելով հաշմանդամություն ունեցող անձի սոցիալական վիճակի առանձնահատկություններից, ինչպես նաև ըստ անհրաժեշտության այլ տեղեկություններ, որոնք կարող են կարևորվել սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացնող կամ դրանց տրամադրման գործընթացը կազմակերպող անձանց (մարմինների, կազմակերպությունների, հիմնարկների) կողմից:

25. ՎԱԾ-ի «Վերականգնողական փորձաքննական եզրակացություն» մասում լրացվում են օրգանիզմի հիմնական ֆունկցիաների խանգարման տեսակը և աստիճանը, կենսագործունեության սահմանափակման տեսակը (տեսակները) և աստիճանը (աստիճանները), հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական ներուժը, կանխատեսումը և հիմնավորվում երաշխավորված վերականգնողական միջոցառումները:

26. «Հաշմանդամ երեխա» կարգավիճակ ունեցող երեխայի ՎԱԾ-ը կազմելիս, ըստ անհրաժեշտության ՎԱԾ-ում ընդգրկվում են նաև մանկավարժական-հոգեբանական վերականգնողական միջոցառումներ, առկայության դեպքում հաշվի են առնվում բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից տրված եզրակացությունները:

27. Թղթային կրիչով ՎԱԾ-ը լրացվում է մուգ կապույտ կամ սև գույնի թանաքով գրիչով, ընթեռնելի ձեռագրով, առանց անհարկի հապավումներ և ջնջումներ կատարելու: Սխալ գրառման դեպքում այն երկու կողմից առնվում է փակագծի մեջ, որից հետո կատարվում է ճիշտ գրառումը և տվյալ էջի աջ անկյունում ՎԱԾ-ը կազմող համապատասխան պաշտոնատար անձի կողմից լրացվում են <<ուղղումը կատարված է իմ կողմից>> բառերը և ուղղումը հավաստվում է ստորագրությամբ:

28. Սույն կարգի 23-րդ և (կամ) 24-րդ կետերում նշված տեղեկատվությունը կամ դրա մի մասը ՎԱԾ-ում լրացվում է այն դեպքում, երբ առկա է համապատասխանաբար մասնագիտական և (կամ) սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման անհրաժեշտություն:

IV. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

1. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ԱՅՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

29. ՎԱԾ-ի իրականացումը կազմակերպվում և այն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված համապատասխան մարմինների (անձանց, կազմակերպությունների, հիմնարկների) կողմից՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում, կարգով և ժամկետներում:

30. Գործակալության համապատասխան տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարության զբաղվածության պետական գործակալության, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների, ՀՍԾՏԿ-ների սոցիալական աշխատողների կողմից ՎԱԾ-ի իրականացումը կազմակերպվում, այն իրականացվում և դրա իրականացմանն աջակցություն է ցուցաբերվում օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

2. ԲԺՇԿԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

31. Բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացվում են հիվանդանոցային, ամբուլատոր կամ առողջարանային բուժման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում:

32. Բժշկական վերականգնում իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) ցանկը, բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման գործընթացում այդ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) իրավասություններն ու պարտականությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

33. Պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնողական տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ տրամադրող կազմակերպությունները ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը ստանում են նաև էլեկտրոնային եղանակով՝ առցանց, հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանից: Հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագիրը, ինչպես նաև <<Տեղեկատվություն բժշկական վերականգնման ծրագրի կատարման մասին>> բաժինն առցանց կերպով հասանելի է սույն կետում նշված կազմակերպություններին՝ միայն դրանցում առկա տվյալների դիտման իրավասությամբ (դիտողի կարգավիճակով):

34. Բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորումը և օրթեզավորումը, հաշմանդամություն ունեցող անձանց սահմանված ժամկետից շուտ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովումն, ինչպես նաև պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների հերթական տրամադրման հետ կապված վիճահարույց դեպքերում՝ դրանց տրամադրումն իրականացվում է սույն կարգի 93-րդ կետում նշված՝ բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից տրված գրավոր եզրակացության հիման վրա:

35. Բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման մասին տեղեկատվությունն արտացոլվում է ինչպես ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմված օրինակում, այնպես էլ ՎԱԾ-ի էլեկտրոնային տարբերակում: Պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնողական տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ տրամադրող կազմակերպությունների կողմից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և տվյալ կազմակերպությունների հետ Նախարարության կնքած համապատասխան պայմանագրերով սահմանված կարգով և ժամկետներում, բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման մասին տեղեկատվությունը լրացվում է ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմված օրինակում, լրացման համար սահմանված ձևին համապատասխան: Սույն կետով նախատեսված տեղեկատվությունը ՎԱԾ-ի էլեկտրոնային տարբերակում ներառվում է սույն կարգի 36-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան:

36. Պրոթեզաօրթոպեդիկ պարագաներ, վերականգնողական տեխնիկական և այլ օժանդակ միջոցներ տրամադրող կազմակերպությունների կողմից, Նախարարության հետ կնքած համապատասխան պայմանագրերով սահմանված պահանջներին համապատասխան, հաշմանդամություն ունեցող անձանց պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցների տրամադրման մասին տեղեկատվությունը էլեկտրոնային եղանակով մուտքագրվում է <<Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ>>-ում: Մուտքագրված տեղեկատվությունը դիտման ռեժիմով առցանց փոխանցվում է էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ի <<Տեղեկատվություն բժշկական վերականգնման ծրագրի կատարման մասին>> բաժին և այդ պահից հասանելի է լինում Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը, Գործակալությանը, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումներին, ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողներին և սույն կարգի 93-րդ կետում նշված՝ բուժատեխնիկական հանձնաժողովի անդամներին: Ընդ որում, սույն կարգի 34-րդ կետով սահմանված դեպքում, <<Պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաների տրամադրման տեղեկատվական համակարգ>>-ում էլեկտրոնային պատկերատպման (սքանավորման) միջոցով ներբեռնվում է նաև բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը:

37. Բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման և դրանց արդյունավետության նկատմամբ հսկողությունը, բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տեսակների և ծավալների մասին բժշկական վերականգնում իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից տրամադրվող տեղեկատվության և ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներին դրանց համապատասխանության ուսումնասիրությունն իրականացնում է սույն կարգի 93-րդ կետում նշված բուժատեխնիկական հանձնաժողովը:

38. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների և սոցիալական աշխատողների կողմից՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգի V բաժնով սահմանված դեպքերում և կարգով:

3. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

39. Նախարարության զբաղվածության պետական գործակալությունը, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, կազմակերպում է ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման գործընթացը՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

40. Մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացվում են Նախարարության զբաղվածության պետական գործակալության համապատասխան տարածքային կենտրոնների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնագիտական վերականգնման օգնություն տրամադրող այլ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից:

41. Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների կողմից մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ սույն կարգով սահմանված դեպքերում և կարգով: Մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման գործընթացում այլ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) իրավասություններն ու պարտականությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

42. ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը Նախարարության զբաղվածության պետական գործակալությունը (այդ թվում՝ տարածքային կենտրոնները) ստանում են էլեկտրոնային եղանակով՝ առցանց, հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանից: Հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում էլեկտրոնային

եղանակով կազմված ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագիրը, ինչպես նաև «Տեղեկատվություն մասնագիտական վերականգնման ծրագրի կատարման մասին» բաժինն առցանց կերպով հասանելի է Նախարարության զբաղվածության պետական գործակալությանը (այդ թվում՝ տարածքային կենտրոններին)՝ միայն դրանցում առկա տվյալների դիտման իրավասությամբ (դիտողի կարգավիճակով):

43. Մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումները Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոններն իրականացնում են հաշմանդամություն ունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով որպես աշխատանք փնտրող անձ հաշվառված լինելու դեպքում:

44. Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները, մասնագիտական վերականգնման ծրագրի շրջանակներում, մասնագիտական վերականգնման միջոցառումների մասին ՎԱԾ-ում լրացված տեղեկատվությանը համապատասխան, ըստ անհրաժեշտության՝

1) հաշմանդամություն ունեցող անձին տրամադրում են մասնագիտական կողմնորոշում և խորհրդատվություն,

2) կազմակերպում են հաշմանդամություն ունեցող անձի մասնագիտական կարողությունների և հմտությունների գնահատումը ու վերականգնումը,

3) կազմակերպում են հաշմանդամություն ունեցող անձի վերամասնագիտացումը,

4) կազմակերպում են վերապատրաստումներ, մասնագիտական և վարպետային ուսուցումներ, հաշմանդամություն ունեցող անձի որակավորման բարձրացմանը և վերաորակավորմանն ուղղված այլ միջոցառումներ,

5) իրականացնում են հաշմանդամություն ունեցող անձի զբաղվածության ապահովմանը միտված գործառույթներ,

6) օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են մասնագիտական վերականգնման միջոցառման իրականացման համար անհրաժեշտ այլ գործառույթներ:

45. Մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացումն ապահովելու նպատակով, Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնների կողմից գնահատվում են հաշմանդամություն ունեցող անձի, որպես աշխատանք փնտրող անձի կարիքները (այսուհետ՝ աշխատանքային կարիքներ), կազմվում է հաշմանդամություն ունեցող անձի զբաղվածության ապահովման անհատական ծրագիրը, իրականացվում են <<Զբաղվածության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված անհրաժեշտ այլ գործառույթներ:

46. Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները, անհրաժեշտության դեպքում աջակցում են հաշմանդամություն ունեցող անձին, որպես աշխատանք փնտրող անձի կարիքների (այսուհետ՝ աշխատանքային կարիքներ) գնահատման համար անհրաժեշտ հարցաթերթիկը լրացնելիս: Հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային կարիքները գնահատելիս, Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները, ի թիվս այլ գործոնների, հաշվի են առնում հաշմանդամության խումբը, «հաշմանդամ երեխա» կարգավիճակը և ՎԱԾ-ի մասնագիտական վերականգնման ծրագրում նշված տեղեկատվությունը:

Հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքային կարիքների գնահատման մասին ամփոփ եզրակացության կազմման համար անհրաժեշտ որոշակի տվյալների ստացման անհրաժեշտության դեպքում, դրանք ստացվում են գրավոր հարցման կամ առցանց՝ էլեկտրոնային եղանակով վարվող տեղեկատվական համապատասխան շտեմարանների միջոցով:

47. Այն դեպքում, երբ մասնագիտական վերականգնման ծրագրում լրիվ կամ մասնակի առկա է հաշմանդամություն ունեցող անձի կողմից առողջական վիճակի բերումով որոշակի աշխատանքներ կատարելու ցուցվածության կամ հակացուցվածության վերաբերյալ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված տեղեկատվությունը (կամ դրա մի մասը), Նախարարության աշխատակազմի զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնները, մասնագիտական վերականգնման միջոցառման իրականացման նպատակով հաշմանդամություն ունեցող անձին զբաղվածության պետական համապատասխան ծրագրում ընդգրկելիս և հարմար աշխատանքի տեղավորելիս (տեղավորման միջնորդություն ներկայացնելիս), հաշվի են առնում մասնագիտական վերականգնման ծրագրի <<Եզրակացությունը>> սյունակում, աշխատանքային երաշխավորագրին և աշխատանքի բնույթի ցուցվածությանը և հակացուցվածությանը, աշխատանքի պայմաններին և ծավալին վերաբերող մասին համապատասխանող տողերում նշված տեղեկատվությունը, այն համադրելով <<Զբաղվածության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարանում թափուր և նոր ստեղծվող աշխատատեղերի (այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի տեղավորման համար սահմանված աշխատատեղերի պարտադիր ապահովման նորմատիվի շրջանակներում առկա աշխատատեղերի) վերաբերյալ տվյալների, զբաղվածության պետական ծրագրերի հնարավորությունների հետ:

48. Սույն կարգի 47-րդ կետում նշված համադրման արդյունքում առանձնացվում են՝

1) այն հնարավոր աշխատատեղերը, որոնք իրականացվող աշխատանքների բնույթով, գործառույթներով, աշխատաժամանակի տևողությամբ, աշխատանքի պայմաններով, ծավալներով պայմանավորված հակացուցված չեն հաշմանդամություն ունեցող անձին և որոնցում աշխատանքների կատարմանը չի խոչընդոտում հաշմանդամություն ունեցող անձի՝ որոշակի աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության սահմանափակման աստիճանը,

2) այն հնարավոր աշխատատեղերը, որոնք որոշակի հարմարեցման դեպքում և (կամ) հաշմանդամություն ունեցող անձին ուղեկցողի առկայության դեպքում կհամապատասխանեն մասնագիտական վերականգնման ծրագրի <<Եզրակացությունը>> սյունակում, աշխատանքային երաշխավորագրին և աշխատանքի բնույթի ցուցվածությանը և հակացուցվածությանը, աշխատանքի պայմաններին և ծավալին վերաբերող մասին համապատասխանող տողերում նշված պահանջներին,

3) զբաղվածության պետական այն ծրագրերը, որոնցում հաշմանդամություն ունեցող անձի ընդգրկումն առավելապես կնպաստի մասնագիտական վերականգնման ծրագրում ներառված միջոցառման արդյունավետ իրականացմանը և հաշմանդամություն ունեցող անձի մասնագիտական վերականգնմանը:

49. Հաշմանդամություն ունեցող անձի կողմից որևէ մասնագիտությամբ կամ որոշակի աշխատանք կատարելու ցուցվածության կամ հակացուցվածության մասին տեղեկությունների ստացման, մասնագիտական վերականգնման ծրագրում ներառված՝ աշխատանքային երաշխավորագրին և աշխատանքի բնույթի ցուցվածությանը և հակացուցվածությանը, աշխատանքի պայմաններին և ծավալներին վերաբերող որևէ տեղեկատվության ճշգրտման, դրան վերաբերող մասնագիտական պարզաբանումներ ստանալու, ինչպես նաև այլ անհրաժեշտության պարագայում, մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումն իրականացնելու պարտավորություն ունեցող՝ Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնը համապատասխան հարցմամբ դիմում է Գործակալության՝ ՎԱԾ-ը կազմող համապատասխան ստորաբաժանմանը (վերափորձաքննության բաժնին) կամ ԲՍՓՀ-ին: Սույն կետով սահմանված հարցումը պետք է բովանդակի նաև կոնկրետ աշխատատեղի և(կամ) աշխատանքի մանրամասն նկարագրությունը, եթե հարցումն իրականացվել է կոնկրետ որևէ մասնագիտությամբ կամ որոշակի աշխատանք կատարելու ցուցվածության կամ հակացուցվածության մասին տեղեկությունների ստացման նպատակով կամ կոնկրետ աշխատատեղի և(կամ) աշխատանքի մանրամասն նկարագրության բացակայությունը օբյեկտիվորեն կխոչընդոտի ՎԱԾ-ը կազմող կառուցվածքային ստորաբաժանմանը կամ ԲՍՓՀ-ին՝ ներկայացնելու հիմնավորված մասնագիտական պատասխան:

50. Հաշմանդամություն ունեցող անձի կողմից առողջական վիճակի բերումով որոշակի աշխատանքներ կատարելու ցուցվածության կամ հակացուցվածության վերաբերյալ սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետում նշված տեղեկատվությունն արտացոլվում է հաշմանդամություն ունեցող անձի զբաղվածության ապահովման անհատական ծրագրում:

51. Մասնագիտական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկատվությունն արտացոլվում է ինչպես ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմված օրինակում, այնպես էլ ՎԱԾ-ի էլեկտրոնային տարբերակում: Մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված յուրաքանչյուր միջոցառման ավարտից, իսկ տվյալ միջոցառումն այլ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից իրականացնելու դեպքում՝ դրա կատարման մասին տեղեկությունը ստանալուց հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնը մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված համապատասխան միջոցառման իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով մուտքագրում է <<Զբաղվածության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ Նախարարության կողմից ձևավորված և վարվող տեղեկատվական շտեմարան: Մուտքագրված տեղեկատվությունը դիտման ռեժիմով առցանց փոխանցվում է էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ի «Տեղեկատվություն մասնագիտական վերականգնման ծրագրի կատարման մասին» բաժին և այդ պահից հասանելի է լինում Գործակալության, այդ թվում՝ ԲՍՓՀ-ների համար: ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագրի կատարման վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով՝ առցանց, հասանելի է լինում նաև սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումներին և ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողներին:

52. ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմված օրինակում, մասնագիտական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկատվությունը լրացվում է ՎԱԾ-ը Նախարարության զբաղվածության պետական գործակալության համապատասխան տարածքային կենտրոն ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում, ստորագրվում և կնքվում է Նախարարության զբաղվածության պետական գործակալության տարածքային կենտրոնի համապատասխան պաշտոնատար անձանց կողմից:

53. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ի մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների և սոցիալական աշխատողների կողմից՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգի V բաժնով սահմանված դեպքերում և կարգով:

4. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

54. Սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացվում են ինչպես սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների, ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողների, այնպես էլ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով սոցիալական վերականգնման օգնություն տրամադրող այլ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից:

55. Սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների և սոցիալական աշխատողների կողմից սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ սույն կարգով սահմանված դեպքերում և կարգով: Սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման գործընթացում այլ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) իրավասություններն ու պարտականությունները սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

56. Սոցիալական վերականգնման ծրագրի շրջանակներում խորհրդատվական օգնությունը տրամադրվում է, իսկ իրավաբանական օգնությունը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների և ՀՍԾՏԿ-ի միասնական ընդունարանների՝ համապատասխան լիազորություններով օժտված աշխատողների և(կամ) սոցիալական աշխատողների կողմից՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

57. Սոցիալական վերականգնման ծրագրի շրջանակներում խնամքի տրամադրմանն ուղղված միջոցառումներն իրականացվում են տնային պայմաններում, բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններում, սոցիալական հոգածության ցերեկային կենտրոններում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում և կարգով:

58. Հատուկ տառատեսակներով՝ Բրայլյան գրքերի տրամադրումը, Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումն իրականացվում է համապատասխան մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում ու կարգով և(կամ) տվյալ կազմակերպությունների կողմից ստանձնած պայմանագրային պարտավորություններին համապատասխան:

59. Հաշմանդամություն ունեցող անձի կամ հաշմանդամություն ունեցող անձի ներկայացուցչի դիմումի համաձայն, սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների կամ դրանց մի մասի տրամադրման գործընթացը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների միջոցով, իսկ հաշմանդամություն ունեցող անձի հաշվառման կամ փաստացի բնակության վայրում ՀՍԾՏԿ-ի առկայության դեպքում՝ ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի միջոցով:

60. ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները և ՀՍԾՏԿ-ներում չտեղակայված սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ը ստանում են առցանց, հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանից, իսկ ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները ՎԱԾ-ը ստանում են նաև թղթային կրիչով, այն կազմող՝ Գործակալության համապատասխան տարածքային և կառուցվածքային ստորաբաժանումների (ԲՍՓՀ-ի և վերափոխաքննության բաժնի) կողմից՝ սույն կարգի 20-րդ կետով սահմանված ժամկետում: Հաշմանդամների հաշվառման հանրապետական շտեմարանում էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ը, այդ թվում՝ դրանում ներառված սոցիալական վերականգնման ծրագիրն, ինչպես նաև ՎԱԾ-ի սոցիալական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկատվությունն արտացոլող բաժինը առցանց կերպով հասանելի է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումներին (ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողին)՝ միայն դրանցում առկա տվյալների դիտման իրավասությամբ (դիտողի կարգավիճակով):

61. ՎԱԾ-ում ներառված սոցիալական վերականգնման ծրագրի վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո, երեք աշխատանքային օրվա ընթացքում, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումը, իսկ ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողը, իրականացնում է հաշմանդամություն ունեցող տվյալ անձի մասին տվյալների համադրումն ընտանիքների անապահովության գնահատման համակարգի տեղեկատվական բազայում և սոցիալական աջակցության տեղեկատվական այլ բազաներում հաշմանդամություն ունեցող տվյալ անձի վերաբերյալ առկա տեղեկատվության հետ:

62. Սույն կարգի 61-րդ կետով սահմանված համադրման արդյունքում պարզվում են՝

1) հաշմանդամություն ունեցող անձի ընտանիքի՝ ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված լինելը և ընտանիքի անապահովության միավորը,

2) հաշմանդամություն ունեցող անձի ընտանիքի սոցիալական կարիքների գնահատման անձնագրի (անձնագրերի) առկայությունը (երբևէ կազմած լինելու հանգամանքը) կամ բացակայությունը, իսկ առկայության դեպքում՝ դրանում արտացոլված տեղեկատվությունը,

3) հաշմանդամություն ունեցող անձի համար երբևէ անհատական սոցիալական ծրագիր (ծրագրեր) կազմած լինելու հանգամանքը, իսկ առկայության դեպքում՝ դրանում արտացոլված տեղեկատվությունը:

63. Համադրման արդյունքներն ամփոփելուց հետո, անկախ սույն կարգի 62-րդ կետով սահմանված հանգամանքների առկայությունից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվում են հաշմանդամություն ունեցող անձին տնային այցելություն (այսուհետ՝ տունայց) կատարելու համար անհրաժեշտ՝ ծրագրավորման ու նախապատրաստման փուլում կատարման ենթակա անհրաժեշտ աշխատանքները, որից հետո իրականացվում է հաշմանդամություն ունեցող անձի փաստացի բնակության վայր այցելությունը (բուն տունայցը):

64. Տունայցի ընթացքում, ի թիվս Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ իրականացման ենթակա այլ գործառույթների, տունայցն իրականացնող սոցիալական աշխատողը (կամ տունայցն իրականացնող հանձնաժողովի կազմում ընդգրկված սոցիալական աշխատողը) հաշմանդամություն ունեցող անձին տեղեկատվություն և խորհրդատվություն է տրամադրում սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման, դրանց հաջորդականության, նպատակների, այդ միջոցառումներն իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) վերաբերյալ, ինչպես նաև իրազեկում է հաշմանդամություն ունեցող անձի կամահայտնության (համաձայնության) առկայության պարագայում սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների կամ դրանց մի մասի տրամադրման գործընթացը, իսկ սույն կարգի 72-րդ և 73-րդ կետով նախատեսված դեպքում՝ ՎԱԾ-ն ամբողջությամբ սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի) միջոցով կազմակերպելու հնարավորության վերաբերյալ, եթե մինչև տունայցի կատարվելը հաշմանդամություն ունեցող անձը դրա համար չի դիմել սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանմանը կամ ՀՍԾՏԿ-ի միասնական ընդունարանին: Սույն կետով սահմանված տեղեկատվությունը և խորհրդատվությունը տրամադրվում է հաշմանդամություն ունեցող անձի ընտանիքի անդամներին (իսկ օրենքի կամ լիազորագրի հիման վրա ներկայացուցիչներ ունենալու կամ պատրոնաժ սահմանված լինելու դեպքում՝ նաև ներկայացուցիչներին ու պատրոնին), եթե հաշմանդամություն ունեցող անձն առողջական վիճակի բերումով չի կարող ինքնուրույն իրականացնել սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներն իրականացնելու իր իրավունքները կամ ունի հաղորդակցվելու կարողության այնպիսի սահմանափակում, որը հնարավորություն չի ընձեռում լիարժեք ընկալել տունայցը կատարող սոցիալական աշխատողի կողմից տրամադրվող տեղեկատվությունը:

65. Սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների կամ դրանց մի մասի տրամադրման գործընթացը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի) միջոցով կազմակերպելու դեպքում, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողը), հաշվի առնելով սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների բնույթը, հաշմանդամություն ունեցող անձին ուղղորդում են տվյալ միջոցառումներն իրականացնող կազմակերպություն:

66. Եթե սույն կարգի 61-րդ կետով սահմանված համադրման արդյունքում պարզվում է, որ հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար վարվում է սոցիալական դեպք, ապա հաշմանդամություն ունեցող անձի անհատական սոցիալական ծրագրում անհրաժեշտության դեպքում կատարվում են համապատասխան փոփոխություններ՝ հաշվի առնելով ՎԱԾ-ի սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումները, իսկ ՎԱԾ-ի սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպվում է՝ սույն կարգի V բաժնով սահմանված պահանջներին համապատասխան:

67. Եթե տունայցի արդյունքների ամփոփման ու վերջնական գնահատման փուլում պարզվում է, որ հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար առկա է սոցիալական դեպքի վարման անհրաժեշտություն, ապա սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպվում է՝ սույն կարգի V բաժնով սահմանված պահանջներին համապատասխան:

68. Սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները, իսկ ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողները, սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված և իրենց կողմից իրականացված յուրաքանչյուր միջոցառման ավարտից հետո ոչ ուշ, քան եռօրյա ժամկետում, դրա կատարման մասին տեղեկատվությունը մուտքագրում են սոցիալական աջակցության տեղեկատվական համապատասխան բազա՝ <<Սոցիալական դեպքի վարման հանրապետական շտեմարան>>: Մուտքագրված տեղեկատվությունը դիտման ռեժիմով առցանց փոխանցվում է էլեկտրոնային եղանակով կազմված ՎԱԾ-ի՝ սոցիալական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկություններ նախատեսող համապատասխան բաժին և այդ պահից հասանելի է լինում Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանմանը (ստորաբաժանումներին) և Գործակալությանը, այդ թվում՝ ԲՍՓՀ-ներին:

69. ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմված օրինակում, սույն կարգի 68-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը լրացվում է այդ միջոցառումների իրականացումից հետո՝ ՎԱԾ-ը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումներին, իսկ ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողներին ներկայացնելուց հետո եռօրյա ժամկետում, ստորագրվում և կնքվում է համապատասխան լիազորություններ ունեցող պաշտոնատար անձի (կամ անձանց) կողմից՝ սահմանված ձևին համապատասխան:

70. Սույն կարգի 61-րդ, 62-րդ, 63-րդ, 64-րդ, 66-րդ, 67-րդ, 68-րդ, 69-րդ կետերով սահմանված պահանջներն ենթակա են կատարման՝ անկախ հաշմանդամություն ունեցող անձի կամ հաշմանդամություն ունեցող անձի ներկայացուցչի դիմումի համաձայն սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների կամ դրանց մի մասի տրամադրման գործընթացը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների, իսկ ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողների կողմից կազմակերպելու հանգամանքից:

71. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ի սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների և սոցիալական աշխատողների կողմից՝ օրենքներով, այլ իրավական ակտերով և սույն կարգի V բաժնով սահմանված դեպքերում և կարգով:

V. ԿՅԱՆՔԻ ԴԺՎԱՐԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԵԼՈՒ ՌԻՍԿԻ ՆԵՐՔՈ ԳՏՆՎՈՂ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

72. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ում նշված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների կողմից, իսկ հաշմանդամություն ունեցող անձի հաշվառման կամ փաստացի բնակության վայրը սպասարկող համալիր սոցիալական ծառայությունների տարածքային կենտրոնի (այսուհետ՝ ՀՍԾՏԿ) առկայության դեպքում՝ ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի կողմից՝ օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան:

73. Սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների կողմից, իսկ հաշմանդամություն ունեցող անձի հաշվառման կամ փաստացի բնակության վայրը սպասարկող ՀՍԾՏԿ-ի առկայության դեպքում՝ ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի կողմից, օրենքներով, այլ իրավական ակտերով, այդ թվում՝ սույն կարգով սահմանված պահանջներին համապատասխան կազմակերպվում է նաև հաշմանդամություն ունեցող այն անձանց ՎԱԾ-ում նշված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը, որոնք կարող են հայտնվել կյանքի դժվարին իրավիճակում:

74. Սույն կարգի 60-րդ կետով սահմանված կարգով ՎԱԾ-ը ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումը, իսկ ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողն իրականացնում է սույն կարգի 61-րդ կետում նշված՝ հաշմանդամություն ունեցող տվյալ անձի մասին տվյալների համադրումը, որից հետո կատարում է տունայց՝ սույն կարգի 63-րդ և 64-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան:

75. Եթե սույն կարգի 61-րդ կետով սահմանված համադրման կամ տունայցի արդյունքների ամփոփման ու վերջնական գնահատման փուլում պարզվում է, որ հաշմանդամություն ունեցող անձը գտնվում է կյանքի դժվարին իրավիճակում կամ գտնվում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո (առկա են բավարար և էական նախադրյալներ, բացասական գործոններ, որոնց ազդեցությունը կարող է հանգեցնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելուն), ապա հաշմանդամություն ունեցող անձի կամահայտնության (համաձայնության) առկայության պարագայում, ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերի տրամադրման գործընթացը կազմակերպվում է սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի) միջոցով: Այն դեպքում, երբ հաշմանդամություն ունեցող անձը գրավոր կերպով հրաժարվում է ՎԱԾ-ում ներառված որևէ ծրագրի կամ ՎԱԾ-ում ներառված ծրագրերում ընդգրկված որևէ միջոցառման իրականացումից կամ դրանց տրամադրման գործընթացը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի) միջոցով կազմակերպելու հնարավորությունից,

ապա սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի) միջոցով կազմակերպվում է ՎԱԾ-ում ներառված այն ծրագրի կամ ՎԱԾ-ում ներառված ծրագրերում ընդգրկված այն միջոցառման (միջոցառումների) տրամադրման գործընթացը, որից հաշմանդամություն ունեցող անձը չի հրաժարվել և որի տրամադրման գործընթացը համաձայն է կազմակերպել սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողի) միջոցով:

76. Սույն կարգի 75-րդ կետում նշված համաձայնությունը ձեռք է բերվում հաշմանդամություն ունեցող անձի ներկայացուցչից, իսկ այդպիսին չունենալու դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձի ընտանիքի անդամներից, եթե հաշմանդամություն ունեցող անձն ունի հաղորդակցվելու կարողության այնպիսի սահմանափակում, որը հնարավորություն չի ընձեռում լիարժեք ընկալել ստացվող տեղեկատվությունը և արտահայտել իր կամահայտնությունը իրավունքների իրականացման ծավալի և վերականգնմանն ուղղված միջոցառումների ստացման եղանակների մասին:

77. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպելիս, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողը) հաշվի առնելով սույն կարգի 21-րդ կետում նշված տվյալները, նախապես ճշտում և հաշմանդամություն ունեցող անձին իրազեկում են հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված բժշկական վերականգնման յուրաքանչյուր միջոցառումն իրականացնելու հնարավորություն ունեցող մարմինների վերաբերյալ, նշելով դրանց անվանումները, գտնվելու վայրերը, աշխատանքային ժամերը, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են կարևորվել բժշկական վերականգնման ծրագրի իրականացման և այլընտրանքային հնարավորությունների առկայության դեպքում բժշկական վերականգնման յուրաքանչյուր միջոցառումն իրականացնող մարմնի (կազմակերպության, հիմնարկի) ընտրության կատարման տեսանկյունից: Բժշկական վերականգնման ծրագրում պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների առկայության դեպքում, հաշմանդամություն ունեցող անձին տրամադրվում է նաև խորհրդատվություն՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման համար իրականացման ենթակա քայլերի և դրանց հաջորդականության վերաբերյալ:

78. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ի մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացը կազմակերպելիս, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողը) հաշմանդամություն ունեցող անձին ուղղորդում են զբաղվածության պետական գործակալության համապատասխան տարածքային կենտրոն՝ նախապես իրազեկելով հաշմանդամություն ունեցող անձի կողմից ձեռնարկվելիք գործողությունների և դրանց հաջորդականության, ներկայացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկի, բովանդակության, դրանց ներկայացման ժամկետների վերաբերյալ, տրամադրում են

անհրաժեշտ խորհրդատվություն, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են կարևորվել մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման տեսանկյունից:

79. ՀՍԾՏԿ-ներում սույն կարգի 78-րդ կետով նախատեսված տեղեկատվությունը հաշմանդամություն ունեցող անձին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրում են նաև ՀՍԾՏԿ-ի միասնական ընդունարանների՝ համապատասխան լիազորություններով օժտված աշխատողները, որոնք հաշմանդամություն ունեցող անձի կողմից փաստաթղթերի թերի (ոչ լիարժեք լինելու) ներկայացման դեպքում մատնանշում են համալրման ենթակա լրացուցիչ փաստաթղթերի ցանկը և դրանց ներկայացման ժամկետները, փաստաթղթային եղանակով՝ թղթային կրիչի վրա դիմումի ներկայացման և դրանում ձևական այնպիսի սխալների առկայության դեպքում, որոնք կարող են շտկվել, դրանք մատնացույց են անում հաշմանդամություն ունեցող անձին (կամ նրա ներկայացուցչին)՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ իրենք են շտկում դրանք՝ այդ մասին իրազեկելով տվյալ անձին:

80. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ի սոցիալական վերականգնման ծրագրի շրջանակներում խորհրդատվական օգնությունը տրամադրվում է, իսկ իրավաբանական օգնությունը կազմակերպվում է սույն կարգի 56-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան:

81. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ում ներառված՝ սոցիալական վերականգնման ծրագրի շրջանակներում խնամքի տրամադրումը, Բրայլի համակարգով լրացուցիչ ուսուցումը, Բրայլյան գրքերի տրամադրումը, ինչպես նաև սոցիալական վերականգնմանն ուղղված այլ միջոցառումների տրամադրումը կազմակերպելու նպատակով, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները և ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողը, հաշվի առնելով սույն կարգի 24-րդ կետում նշված տվյալները, նախապես ճշտում և հաշմանդամություն ունեցող անձին իրազեկում են հաշմանդամություն ունեցող տվյալ անձի համար նախատեսված սոցիալական վերականգնման յուրաքանչյուր միջոցառումն իրականացնելու հնարավորություն ունեցող մարմինների վերաբերյալ, նշելով դրանց անվանումները, գտնվելու վայրերը, աշխատանքային ժամերը, ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են կարևորվել սոցիալական վերականգնման ծրագրի իրականացման և այլընտրանքային հնարավորությունների առկայության դեպքում սոցիալական վերականգնման յուրաքանչյուր միջոցառումն իրականացնող մարմնի (կազմակերպության, հիմնարկի) ընտրության կատարման տեսանկյունից:

82. Սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները (ՀՍԾՏԿ-ում սոցիալական աշխատողը) կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերի տրամադրման գործընթացը կազմակերպելիս, ըստ անհրաժեշտության, համագործակցում են Գործակալության վերափորձաքննության բաժնի և ԲՍՓՀ-ների, Նախարարության զբաղվածության պետական գործակալության (այդ թվում՝ դրա համապատասխան տարածքային կենտրոնների), օրենքով սահմանված՝ աջակցող ցանցի մասնակիցների, միջգերատեսչական սոցիալական

համագործակցության կողմերի, խնամք տրամադրող կազմակերպությունների սոցիալական աշխատողների հետ՝ վարչական, կազմակերպչական, մարդկային, նյութական, տեղեկատվական և այլ ռեսուրսների ու հնարավորությունների զուգակցված, արդյունավետ և նպատակային կիրառմամբ հաշմանդամություն ունեցող անձի վերականգնմանը նպաստելու և ՎԱԾ-ի իրականացման գործընթացում հաշմանդամություն ունեցող անձի իրավունքների արդյունավետ իրականացման և օրինական շահերի պաշտպանության նպատակով:

83. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումների տրամադրման գործընթացի կազմակերպման և դրանց իրականացման ողջ ընթացքում, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները (ՀԱԾՏԿ-ում սոցիալական աշխատողը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում աջակցում են հաշմանդամություն ունեցող անձին՝ ՎԱԾ-ում ընդգրկված միջոցառումների իրականացման ընթացքում հնարավոր խնդիրները լուծելու և խոչընդոտները վերացնելու հարցերում:

84. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված և այլ մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից իրականացվող և իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները (ՀԱԾՏԿ-ում սոցիալական աշխատողը) ստանում են ինչպես հաշմանդամություն ունեցող անձից, այդ միջոցառումներն իրականացնող համապատասխան մարմիններից, այնպես էլ էլեկտրոնային եղանակով՝ սույն կարգի 20-րդ, 36-րդ, 51-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան: Բացառությամբ բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման մասին տեղեկատվության, որը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումներին և ՀԱԾՏԿ-ում սոցիալական աշխատողներին հասանելի է լինում էլեկտրոնային համակարգի միջավայրում համապատասխան տեղեկատվության մուտքագրման պահից, բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված այլ միջոցառումների կատարման վերաբերյալ տեղեկատվությունը ստանալու համար, հաշվի առնելով բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված համապատասխան միջոցառումների կատարման ժամկետները, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները և ՀԱԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները հարցմամբ դիմում են այդ միջոցառումներն իրականացնող համապատասխան մարմիններին (կազմակերպություններին, հիմնարկներին): Սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները և ՀԱԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները հարցմամբ դիմում են նաև սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված այն միջոցառումներն իրականացնող մարմիններին (կազմակերպություններին, հիմնարկներին), որոնց կատարման վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով հասանելի չէ իրենց:

85. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումների իրականացման և դրանց իրականացմանն աջակցության հետ կապված հարաբերությունների վրա սույն կարգի IV-րդ բաժնով նախատեսված դրույթները տարածվում են, եթե այլ բան չի բխում սույն բաժնով սահմանված կարգավորման առանձնահատկություններից և որքանով որ դրանք կիրառելի են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

VI. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

86. ՎԱԾ-ում փոփոխություններ և(կամ) լրացումներ կարող են կատարվել ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնի կամ ԲՍՓՀ-ի կողմից, ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական ծրագրերի կամ դրանցից որևէ մեկի իրականացման ընթացքում, այդպիսի անհրաժեշտության առկայության պարագայում՝

1) հաշմանդամություն ունեցող անձի դիմումի հիման վրա,

2) ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական, սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումներն իրականացնող համապատասխան մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների), Նախարարության զբաղվածության պետական գործակալության (այդ թվում՝ դրա տարածքային կենտրոնների), սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների, ՀՍԾՏԿ-ների սոցիալական աշխատողների և սույն կարգի 93-րդ կետում նշված բուժատեխնիկական հանձնաժողովի նախաձեռնությամբ,

3) ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնի կամ ԲՍՓՀ-ի նախաձեռնությամբ,

4) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի փետրվարի 05-ի թիվ 22-Ա/1 հրամանով հաստատված N1 հավելվածով սահմանված դեպքերում և կարգով:

87. ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերից յուրաքանչյուրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարվում են այն դեպքում, եթե համապատասխան ծրագրում ընդգրկված մեկ կամ մի քանի միջոցառումների իրականացման արդյունքում պարզվում է, որ դրանք չեն նպաստել հաշմանդամություն ունեցող անձի լրիվ կամ մասնակի վերականգնմանը կամ այդ միջոցառումների արդյունավետությունն էապես ցածր է եղել ակնկալվող արդյունքներից, կամ ՎԱԾ-ի կազմելուց հետո հաշմանդամություն ունեցող անձի առողջական վիճակի, սոցիալական կարիքների փոփոխությամբ պայմանավորված, առաջացել է հաշմանդամություն ունեցող անձի վերականգնմանն ուղղված նոր միջոցառումների կատարման կամ իրականացվող միջոցառումների ձևի և ծավալի փոփոխության անհրաժեշտություն, կամ փոփոխությունների և (կամ) լրացումների կատարումն էապես կնպաստի հաշմանդամություն ունեցող անձի առողջության,

աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության կամ սոցիալական կարգավիճակի վերականգնմանը:

88. Սույն կարգի 93-րդ կետում նշված բուժատեխնիկական հանձնաժողովը՝ ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագրում, Նախարարության զբաղվածության պետական գործակալությունը (այդ թվում՝ դրա տարածքային կենտրոնները)՝ ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագրում, իսկ սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները և ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները՝ սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման կամ դրանց իրականացումը կազմակերպելու ընթացքում, կամ այդ միջոցառումների իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո, սույն կարգի 87-րդ կետով սահմանված որևէ հանգամանքի առկայության դեպքում, գրավոր կերպով դիմում են ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնին կամ ԲՍՓՀ-ին՝ ՎԱԾ-ում ներառված համապատասխան վերականգնման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկությամբ՝ ներկայացնելով փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասնագիտական հիմնավորումը (եզրակացությունը):

89. Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող հաշմանդամություն ունեցող անձանց ՎԱԾ-ում նշված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված միջոցառումների կամ դրանց մի մասի տրամադրման գործընթացը սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների, իսկ ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողների կողմից կազմակերպելու դեպքում, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները, իսկ ՀՍԾՏԿ-ներում՝ սոցիալական աշխատողները, սույն կարգի 87-րդ կետով սահմանված որևէ հանգամանքի առկայության դեպքում, կարող են գրավոր կերպով դիմել ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնին կամ ԲՍՓՀ-ին՝ ՎԱԾ-ում ներառված վերականգնման ցանկացած ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկությամբ՝ ներկայացնելով փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասնագիտական հիմնավորումը (եզրակացությունը):

90. ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժինը կամ ԲՍՓՀ-ն, ուսումնասիրելով ստացված առաջարկությունը (դիմումը) և փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու մասնագիտական հիմնավորումը (եզրակացությունը), իրականացնելով մասնագիտական քննարկում առաջարկությունը ներկայացնողների, իսկ անհրաժեշտության դեպքում՝ Նախարարության համապատասխան ստորաբաժանումների, այլ մարմինների կամ կազմակերպությունների հետ, հինգ աշխատանքային օրվա ընթացքում ընդունում է ՎԱԾ-ում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկությունը կամ մերժում է այն: ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժինը կամ ԲՍՓՀ-ն, երեք աշխատանքային օրվա ընթացքում գրավոր ծանուցում է առաջարկությունը ներկայացնողին՝ այն ընդունելու կամ մերժելու մասին: Սույն կարգի 86-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքում, ՎԱԾ-ն ենթակա է փոփոխման՝ համաձայն համապատասխան հանձնարարականի:

91. Սույն կարգի 90-րդ կետով սահմանված առաջարկությունն ընդունելու, ինչպես նաև սույն կարգի 86-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված դեպքերում, ՎԱԾ-ի

էլեկտրոնային տարբերակում՝ փոփոխություններին և լրացումներին վերաբերող համապատասխան մասերում, մուտքագրվում են կատարված փոփոխությունները և (կամ) լրացումները, իսկ այդ փոփոխություններին և լրացումներին համապատասխան իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունն էլեկտրոնային եղանակով՝ առցանց, ՎԱԾ-ի էլեկտրոնային տարբերակում արտացոլվում է համապատասխան տեղեկատվական շտեմարաններում այդ տեղեկատվության մուտքագրման պահից: ՎԱԾ-ում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարող՝ Գործակալության վերափորձաքննության բաժինը կամ ԲՍՓՀ-ն, այդ փոփոխությունները և (կամ) լրացումները կատարելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում, հաշմանդամություն ունեցող անձին իրազեկում է ՎԱԾ-ում կատարված փոփոխությունների և (կամ) լրացումների մասին, ինչպես նաև ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմած օրինակը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ՝ դրանում համապատասխան տեղեկությունները լրացնելու նպատակով:

92. ՎԱԾ-ի թղթային կրիչով կազմած օրինակում փոփոխություններ և(կամ) լրացումներ կատարելիս, փոփոխություններին և լրացումներին վերաբերող համապատասխան մասերում նշվում են նաև փոփոխությունների և(կամ) լրացումների կատարման օրը, ամիսը, տարին և ստորագրվում համապատասխան իրավասություն ունեցող պաշտոնատար անձի (անձանց) կողմից:

VII. ԲՈՒԺԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

93. Բուժատեխնիկական հանձնաժողովը ստեղծվում է (կազմավորվում է) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից:

94. Բուժատեխնիկական հանձնաժողովը՝

1) ՎԱԾ-ի կազմման ընթացքում, անհրաժեշտության դեպքում, մասնագիտական օժանդակություն է ցուցաբերում բժշկական վերականգնման ծրագրում անհրաժեշտ միջոցառումների ընդգրկման հարցերում,

2) հսկողություն է իրականացնում ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման և դրանց արդյունավետության նկատմամբ,

3) իրականացնում է ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տեսակների և ծավալների մասին բժշկական վերականգնում իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից տրամադրվող տեղեկատվության և ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներին դրանց համապատասխանության ուսումնասիրությունը,

4) գրավոր եզրակացություն է տալիս՝

ա. ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորման և օրթեզավորման, պրոթեզի և օրթեզի համապատասխան տեսակի վերաբերյալ,

բ. հաշմանդամություն ունեցող անձանց սահմանված ժամկետից շուտ պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներով ապահովելու վերաբերյալ,

գ. պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման վերաբերյալ՝ դրանց հերթական տրամադրման հետ կապված վիճահարույց դեպքերում,

5) սույն կարգի 88-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան դիմում է ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնին կամ ԲՍՓՀ-ին՝ ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկությամբ,

6) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատակարգով իրեն վերապահված այլ գործառույթներ:

95. Բուժատեխնիկական հանձնաժողովում ընդգրկվում են մեկ բժիշկ-փորձագետ՝ վիրաբույժի կամ վնասվածքաբան-օրթոպեդի մասնագիտությամբ և երկու վերականգնողաբաններ: Բուժատեխնիկական հանձնաժողովում, ըստ անհրաժեշտության կարող են ընդգրկվել նաև այլ մասնագետներ, ինչպես նաև Նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման և Գործակալության աշխատողներ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

96. ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում անհրաժեշտ միջոցառումների ընդգրկման հարցերում ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնին և ԲՍՓՀ-ին մասնագիտական օժանդակություն ցուցաբերելու անհրաժեշտության դեպքում, բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից մասնագիտական օժանդակությունը կարող է տրամադրվել ինչպես հեռակա կարգով՝ բժշկասոցիալական փորձաքննության գործում առկա համապատասխան փաստաթղթերի (հետազոտման տվյալների, էպիկրիզների, որոշումների, մասնագիտական հիվանդության վերաբերյալ եզրակացությունների, մասնագիտական օժանդակության տրամադրման համար անհրաժեշտ այլ փաստաթղթերի) ուսումնասիրության միջոցով, այնպես էլ բուժատեխնիկական հանձնաժողովի մեկ կամ մի քանի անդամի կողմից ԲՍՓՀ-ներ կամ հաշմանդամություն ունեցող անձի գտնվելու վայր այցելությունների միջոցով՝ մասնագիտական օժանդակությունը տեղում ցուցաբերելու նպատակով: Ընդ որում, այցելությունները կատարվում են այն դեպքում, երբ առանց հաշմանդամություն ունեցող անձի բժշկական զննության, հնարավոր չէ որոշել բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկման ենթակա անհրաժեշտ միջոցառումը կամ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների շրջանակներում որոշել անհրաժեշտ պրոթեզաօրթոպեդիկ պարագան կամ վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցը: Սույն կետով սահմանված մասնագիտական օժանդակությունը ցուցաբերվում է ոչ ուշ, քան ՎԱԾ-ի կազմման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետի ավարտը:

97. ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների կատարման և դրանց արդյունավետության նկատմամբ հսկողությունն իրականացնելու նպատակով,

բուժատեխնիկական հանձնաժողովը համադրում է ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված՝ պրոթեզաօրթոպեդիկ պարագաներով, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցներով ապահովում նախատեսող միջոցառումների վերաբերյալ էլեկտրոնային եղանակով ստացված տվյալները՝ այդ միջոցառումների կատարման մասին սույն կարգի 36-րդ կետով նախատեսված տեղեկատվության հետ:

98. Բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տեսակների և ծավալների մասին բժշկական վերականգնում իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից տրամադրվող տեղեկատվության և ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումներին դրանց համապատասխանությունն ուսումնասիրելու նպատակով, բուժատեխնիկական հանձնաժողովը՝

1) ըստ վարչատարածքային միավորների, ընտրում է էլեկտրոնային եղանակով կազմված որոշակի քանակով ՎԱԾ-եր և ուսումնասիրում դրանցում ներառված՝ բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումները (իրականացման ենթակա միջոցառումների բնույթը, ծավալը, կատարողը և այլն), ընդ որում, ընտրությունը կարող է իրականացվել ինչպես պատահականության սկզբունքով, այնպես էլ որոշակի չափանիշներից ելնելով (ըստ հաշմանդամության խմբերի, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2014 թվականի փետրվարի 05-ի թիվ 22-Ա/1 հրամանով հաստատված N1 հավելվածով սահմանված ռիսկային գործոն պարունակող որոշումների հիման վրա կազմված ՎԱԾ-եր և այլն),

2) սահմանված ժամանակացույցին համապատասխան, վարչատարածքային միավորներ այցելությունների միջոցով, ծանոթանում է բժշկական վերականգնում իրականացնող համապատասխան մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից սույն կետի 1-ին ենթակետում նշված ՎԱԾ-երի՝ միայն թղթային կրիչով կազմած օրինակում լրացված՝ բժշկական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկությունների հետ և հաշմանդամություն ունեցող այն անձանցից, որոնց համար կազմվել են այդ ՎԱԾ-երը, տեղեկանում է բժշկական վերականգնման ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների մասին,

3) ՎԱԾ-ի միայն թղթային կրիչով կազմած օրինակում լրացված՝ բժշկական վերականգնման ծրագրի կատարման մասին տեղեկությունները (այդ թվում՝ բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների տեսակների և ծավալների մասին ներկայացված տեղեկատվությունը) համադրում է ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների և բժշկական վերականգնման ծրագրի շրջանակներում փաստացի իրականացված միջոցառումների մասին հաշմանդամություն ունեցող անձանցից ստացված տեղեկությունների հետ:

99. Սույն կարգի 97-րդ և 98-րդ կետերով սահմանված գործառույթների իրականացման արդյունքում անհամապատասխանություններ, թերություններ, բժշկական վերականգնում իրականացնող համապատասխան մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումները չկատարելու կամ ոչ լրիվ կատարելու դեպքեր հայտնաբերելու պարագայում, դրանց հայտնաբերման օրվանից ոչ ուշ, քան հինգ աշխատանքային օրվա ընթացքում, բուժատեխնիկական հանձնաժողովն այդ մասին

գրավոր կերպով իրազեկում է Գործակալության պետին և ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժնին կամ ԲՍՓՀ-ին :

100. Սույն կարգի 99-րդ կետով սահմանված դեպքում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում, Գործակալության պետը կատարում է իրավիճակից բխող անհրաժեշտ և բավարար միջոցառումներ՝ արձանագրված խնդիրների լուծման և թերությունների վերացման, դրանք հետագայում բացառելու նպատակով, այդ թվում, կարող է դիմել բժշկական վերականգնում իրականացնող համապատասխան մարմնին (կազմակերպությանը, հիմնարկին)՝ ՎԱԾ-ի բժշկական վերականգնման ծրագրի կատարման մասին անհրաժեշտ պարզաբանումներ ստանալու համար: Բուժատեխնիկական հանձնաժողովը, ՎԱԾ-ը կազմող՝ Գործակալության վերափորձաքննության բաժինը կամ ԲՍՓՀ-ն իրազեկվում են սույն կետով սահմանված միջոցառումների իրականացման, դրանց ընթացքի և արդյունքների վերաբերյալ:

101. Իր գործառույթների պատշաճ իրականացման նպատակով, բուժատեխնիկական հանձնաժողովն, ըստ անհրաժեշտության, համագործակցում է Նախարարության համապատասխան կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, Նախարարության ենթակայությանը հանձնված պետական ոչ առևտրային կազմակերպությունների, սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումների և ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողների, հաշմանդամների հիմնահարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունների, այլ մարմինների, կազմակերպությունների և հիմնարկների հետ:

102. Բուժատեխնիկական հանձնաժողովը, մինչև յուրաքանչյուր եռամսյակի ավարտին հաջորդող ամսվա 15-ը, Գործակալության պետին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ եռամսյակում իր կողմից իրականացված գործառույթների և դրանց արդյունքների վերաբերյալ: Բուժատեխնիկական հանձնաժողովը, մինչև յուրաքանչյուր ֆինանսական տարվա ավարտին հաջորդող ամսվա վերջին օրը, Գործակալության պետին և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին է ներկայացնում հաշվետվություն՝ նախորդ տարում իր կողմից իրականացված գործառույթների և դրանց արդյունքների վերաբերյալ: Սույն կետով սահմանված հաշվետվությունները, ի թիվս այլ տեղեկությունների, պետք է պարունակեն սույն կարգի 94-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված եզրակացությունների քանակի և դրանց բովանդակության, ինչպես նաև առկայության դեպքում՝ բացահայտված խնդիրների, թերությունների, անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվություն՝ հնարավորության դեպքում առաջադրելով նաև դրանց լուծման, վերացման, հետագայում բացառելու մասին առաջարկությունները: Հաշվետվությունների ներկայացման կարգը և ձևը սահմանվում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի կողմից՝ Գործակալության պետի ներկայացմամբ:

VIII. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

103. ՎԱԾ-ում ընդգրկված վերականգնողական միջոցառումների արդյունավետությունը գնահատելիս, հաշվի են առնվում այդ միջոցառումների իրականացման փաստացի արդյունքները, դրանց ազդեցությունը հաշմանդամություն ունեցող անձի վերականգնմանը:

104. ՎԱԾ-ով նախատեսված վերականգնողական միջոցառումների ամբողջական արդյունքները գնահատվում են ՎԱԾ-ում ընդգրկված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված բոլոր միջոցառումների իրականացումից հետո՝ հաշմանդամություն ունեցող անձի բժշկասոցիալական վերափորձաքննության ժամանակ, բացառությամբ սույն կարգի 105-րդ կետով սահմանված դեպքերի: ՎԱԾ-ում ընդգրկված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված առանձին միջոցառումների արդյունավետությունը գնահատվում է տվյալ միջոցառումների ավարտից հետո:

105. Այն դեպքում, երբ հաշմանդամություն ունեցող անձի բժշկասոցիալական վերափորձաքննությունն իրականացվում է մինչև հաշմանդամության խմբի կամ <<հաշմանդամ երեխա>> կարգավիճակի համար սահմանված ժամկետի լրանալը և վերափորձաքննության իրականացման օրվա դրությամբ դեռևս չեն ավարտվել ՎԱԾ-ում ընդգրկված բոլոր միջոցառումները, ապա գնահատվում են միայն տվյալ օրվա դրությամբ ավարտված վերականգնողական միջոցառումների արդյունքները: Անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների համար կազմած ՎԱԾ-ի նկատմամբ իրականացվում է դինամիկ հսկողություն՝ սույն կարգով և այլ իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան:

106. Գործակալության վերափորձաքննության բաժինը կամ ԲՍՓՀ-ն, հաշմանդամություն ունեցող անձի վերափորձաքննությունից հետո, հիմք ընդունելով վերափորձաքննության արդյունքները և բժշկական, մասնագիտական, սոցիալական վերականգնման ծրագրերն իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից դրանց կատարման վերաբերյալ ՎԱԾ-ի համապատասխան բաժիններում կատարված գրառումները, իսկ առկայության դեպքում՝ նաև սույն կարգի 99-րդ և 100-րդ կետերով նախատեսված հանգամանքները, գնահատում է հաշմանդամություն ունեցող անձի ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերի իրականացման արդյունքները, ՎԱԾ-ի՝ թղթային կրիչով և էլեկտրոնային եղանակներով կազմած օրինակների «Կատարված վերականգնողական միջոցառումների արդյունքների գնահատում» բաժնում կատարելով համապատասխան գրառումներ: Անժամկետ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվածների ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերի իրականացման արդյունքները գնահատվում և ՎԱԾ-ի՝ թղթային կրիչով և էլեկտրոնային եղանակներով կազմած օրինակների «Կատարված վերականգնողական միջոցառումների արդյունքների գնահատում» բաժնում համապատասխան գրառումները կատարվում են՝ հիմք ընդունելով բժշկական, մասնագիտական, սոցիալական վերականգնման ծրագրերն իրականացնող մարմինների (կազմակերպությունների, հիմնարկների) կողմից դրանց կատարման վերաբերյալ ՎԱԾ-ի համապատասխան բաժիններում կատարված գրառումները, իսկ առկայության դեպքում՝ նաև սույն կարգի 99-րդ և 100-րդ կետերով նախատեսված հանգամանքները:

107. Բժշկական վերականգնման արդյունքները գնահատելիս, ՎԱԾ-ի «Կատարված վերականգնողական միջոցառումների արդյունքների գնահատում» բաժնում ընդգծում է (լրացվում է) նշվածներից որևէ մեկը՝

1) խանգարված ֆունկցիան վերականգնվել է,

2) հասցվել է կոմպենսացիայի փուլ,

3) դրական արդյունքները բացակայում են:

108. Մասնագիտական վերականգնման արդյունքները գնահատելիս, ՎԱԾ-ի «Կատարված վերականգնողական միջոցառումների արդյունքների գնահատում» բաժնում ընդգծում է (լրացվում է) նշվածներից որևէ մեկը՝

1) նոր մասնագիտության ձեռք բերում (ուսուցում, վերամասնագիտացում),

2) աշխատանքով ապահովում (լրիվ, ոչ լրիվ զբաղվածությամբ),

3) դրական արդյունքները բացակայում են:

109. Սոցիալական վերականգնման արդյունքները գնահատելիս, ՎԱԾ-ի «Կատարված վերականգնողական միջոցառումների արդյունքների գնահատում» բաժնում ընդգծում է (լրացվում է) նշվածներից որևէ մեկը՝

1) ինքնասպասարկումն ապահովված է,

2) ինտեգրվել է հասարակություն,

3) դրական արդյունքները բացակայում են:

110. Սույն կարգի 107-րդ, 108-րդ և 109-րդ կետերով սահմանված տվյալների ամփոփման արդյունքում, ՎԱԾ-ի՝ թղթային կրիչով և էլեկտրոնային եղանակներով կազմած օրինակներում գնահատվում է ՎԱԾ-ի ընդհանուր իրականացումը՝ լրիվ կամ մասնակի, իսկ <<Եզրակացություն ՎԱԾ-ի իրականացման վերաբերյալ>> բաժնում, համապատասխան պաշտոնատար անձի (ԲՍՓՀ-ի նախագահի կամ վերափորձաքննության բաժնի պետի) կողմից ամփոփվում են ՎԱԾ-ում ներառված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերի իրականացման արդյունքները:

111. ՎԱԾ-ում ընդգրկված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված առանձին միջոցառումների արդյունավետությունը գնահատվում է՝

1) բուժատեխնիկական հանձնաժողովի կողմից՝ ՎԱԾ-ում ներառված բժշկական վերականգնման ծրագրում ընդգրկված համապատասխան միջոցառման իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո,

2) Նախարարության զբաղվածության պետական գործակալության (այդ թվում՝ դրա տարածքային կենտրոնների կողմից՝ ՎԱԾ-ում ներառված մասնագիտական վերականգնման ծրագրում ընդգրկված տվյալ միջոցառման տրամադրման գործընթացն իր կողմից կազմակերպելու կամ իրականացնելու դեպքում՝ համապատասխան միջոցառումն իրականացնելուց կամ դրա իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո,

3) սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները և ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները՝ սոցիալական վերականգնման ծրագրում ընդգրկված միջոցառումների իրականացման կամ դրանց իրականացումը կազմակերպելու դեպքում՝ համապատասխան միջոցառումն իրականացնելուց կամ դրա իրականացման արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուց հետո:

112. ՎԱԾ-ում ընդգրկված բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնման ծրագրերում ընդգրկված առանձին միջոցառումների արդյունավետության գնահատման արդյունքում, բուժատեխնիկական հանձնաժողովը, Նախարարության զբաղվածության պետական գործակալությունը (այդ թվում՝ դրա տարածքային կենտրոնները), սոցիալական ծառայությունների տարածքային ստորաբաժանումները և ՀՍԾՏԿ-ներում սոցիալական աշխատողները, սույն կարգի 88-րդ կետով սահմանված պահանջներին համապատասխան, հանդես են գալիս ՎԱԾ-ում ներառված համապատասխան վերականգնման ծրագրում փոփոխություններ և (կամ) լրացումներ կատարելու առաջարկությամբ, և (կամ) Գործակալությանը ներկայացնում են առաջարկություններ՝ ՎԱԾ-երի կազմման և իրականացման գործընթացում հետագա թերությունները բացառելու, հաշմանդամություն ունեցող անձի համար ՎԱԾ-ի իրականացման գործընթացն առավել արդյունավետ դարձնելու վերաբերյալ:

IX. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

113. Սույն կարգով նախատեսված՝ էլեկտրոնային եղանակով ՎԱԾ-ի վարումը, համապատասխան տեղեկատվական շտեմարաններում տեղեկությունների մուտքագրումը և տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության ինքնաշխատ փոխանակությունն իրականացվում է 2014 թվականի դեկտեմբերի 1-ից, բացառությամբ սույն կարգն ուժի մեջ մտնելու պահին արդեն իսկ գործող՝ տեղեկատվական շտեմարաններում տեղեկությունների մուտքագրման և տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակության դեպքերի:

Հավելված N 2
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2014 թվականի դեկտեմբերի N 111 – Ա/1 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԲԺԻՇԿ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) բժիշկ-վերականգնողաբանը քաղաքացիական աշխատանք կատարող է:
2. Բժիշկ-վերականգնողաբանին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի ղեկավարը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Բժիշկ-վերականգնողաբանն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Գործակալության պետին:
4. Բժիշկ-վերականգնողաբանն իրեն ենթակա աշխատողներ չունի:
5. Բժիշկ-վերականգնողաբանը՝

   1) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պաշտոնի սույն բնութագրով և աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով) իրեն վերապահված գործառույթները, դրանց շրջանակներում Գործակալության պետի կողմից տրված հանձնարարականները,

   2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, պաշտոնի սույն բնութագրով, աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով) սահմանված պահանջների, իրեն ամրագրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, իրեն վերապահված լիազորությունների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման կամ վերազանցման, Գործակալության պետի կողմից տրված հանձնարարականների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

III. ԲԺԻՇԿ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Բժիշկ-վերականգնողաբանը՝
   1) Գործակալության պետի հանձնարարությամբ մեթոդական օգնություն է ցուցաբերում Գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներին և վերափորձաքննության բաժնին՝ հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրի կազմման (այսուհետ՝ ՎԱԾ), բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական միջոցառումների տեսակների ու ծավալների որոշման և արդյունավետության գնահատման գործընթացներում,
   2) մեթոդական օգնություն է ցուցաբերում բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներին հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքի պայմանների, բնույթի որոշման և հաշմանդամություն ունեցող անձին համապատասխան աշխատանք կատարելու վերաբերյալ երաշխավորագիր կազմելու գործընթացներում, իսկ անհրաժեշտության դեպքում, Գործակալության պետի հանձնարարությամբ անմիջականորեն մասնակցում է դրա կազմմանը,
   3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ստեղծված բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին և իրականացնում է բուժատեխնիկական հանձնաժողովի անդամին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատակարգով վերապահված գործառույթները, այդ թվում՝
      ա. մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորման և օրթեզավորման, պրոթեզի և օրթեզի համապատասխան տեսակի վերաբերյալ եզրակացության կազմմանը,
      բ. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետից շուտ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման անհրաժեշտության վերաբերյալ եզրակացության կազմմանը,
      գ. մասնակցում է պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման գործընթացի հետ կապված վիճահարույց դեպքերում եզրակացության կազմմանը,
   4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական միջոցառումների իրականացման նկատմամբ մոնիթորինգի աշխատանքներին,
   5) իր իրավասությունների շրջանակներում կարող է ներկայացնել առաջարկություններ վերականգնողական միջոցառումների իրականացման գործընթացի բարելավման ուղղությամբ,
   6) իր իրավասությունների շրջանակներում դինամիկ հսկողություն է իրականացնում ՎԱԾ-ով նախատեսված վերականգնողական միջոցառումների իրագործման նկատմամբ,

7) իր լիազորությունների շրջանակներում՝ Գործակալության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցումներ և այլ գրություններ, իր կողմից իրականացման ենթակա գործառույթների հետ կապված կատարում է Գործակալության պետի կողմից տրված այլ հանձնարարությունները,
8) մասնակցում է Գործակալության աշխատանքներից, գործառույթներից և հիմնախնդիրներից բխող նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, մշակման աշխատանքներին,
9) մասնակցում է Գործակալությունում կազմակերպվող սեմինարներին, խորհրդակցություններին և աշխատանքային քննարկումներին, Գործակալության պետի հանձնարարությամբ մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ներկայացնում է առաջարկություններ, զեկուցումներ, հաշվետվություններ և այլն,
10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7. Բժիշկ-վերականգնողաբանն ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ, սոցիալական երաշխիքներ և պարտականություններ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Բժիշկ-վերականգնողաբանը՝

1) Գործակալության ներսում շփվում է Գործակալության պետի, Գործակալության պետի տեղակալի, Գործակալության աշխատողների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում,

2) Աշխատակազմի ներսում շփվում է Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում,

3) Աշխատակազմից դուրս, իր աշխատանքային պարտականությունների և գործառույթների հետ կապված շփվում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումն իրականացնող կազմակերպությունների, այլ մարմինների և կազմակերպությունների պաշտոնատար անձանց և աշխատողների հետ և, որպես ներկայացուցիչ հանդես է գալիս Գործակալության պետի հանձնարարությամբ՝ իր լիազորությունների շրջանակներում:

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Բժիշկ-վերականգնողաբանը՝

1) մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման գործընթացի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին,
2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Գործակալության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Բժիշկ-վերականգնողաբանը՝
1) ունի բարձրագույն բժշկական կրթություն՝ վերականգնողաբանի մասնագիտությամբ կամ որակավորմամբ,
2) ունի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ավարտել է կլինիկական օրդինատուրա՝ ստանալով բժիշկ-վերականգնողաբանի որակավորում,
3) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, հաշմանդամների սոցիալական պաշտպանության և բժշկասոցիալական փորձաքննության ոլորտները, վարչական վարույթների և վարչարարության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, իր լիազորությունների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ իրավական ակտերի իմացություն,
4) ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, տիրապետում է սույն պաշտոնի բնութագրով և աշխատանքային պայմանագրով (և/կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով) նախատեսված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հմտությունների և ունակությունների (ցանկ N1), անհրաժեշտ տեղեկատվությանը,
5) տիրապետում է հայերեն լեզվին, կարող է գրավոր և բանավոր կերպով հաղորդակցվել գրական հայերենով,
6) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

ՑԱՆԿ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԲԺԻՇԿ-ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/h	Անհրաժեշտ հմտությունների և ունակությունների տեսակը	Հմտությունների և ունակությունների բնութագիրը
1.	***Անձնական***	միջանձնային բնականոն հարաբերությունների հաստատում, հանդուրժողականություն, համբերատարություն, բարյացակամություն, քաղաքավարություն, պարտաճանաչություն, պատասխանատվություն, առողջ դատողություն, սթրեսի կառավարում, աշխատասիրություն, բարեխղճություն
2.	***Գործնական***	թիմային աշխատանք, հաղորդակցություն, ուշադրություն, ճշգրտություն, վերլուծական մտածողություն, տրամաբանություն, տեղեկատվական հոսքերի հետ աշխատանք, աշխատանքային պլանի մշակում, արդյունքների ապահովում, նպատակաուղղված մոտեցում, գրավոր և բանավոր խոսքի տրամաբանական կառուցում, նպատակների սահմանում, առաջնայինի և երկրորդականի տարբերակում, խնդիրների վերլուծություն, գնահատում, սահմանափակ ժամանակի պայմաններում խնդիրների լուծում, որոշումների նախապատրաստում, կայացում, ներկայացման լավ կարողություններ, բանակցային հմտություններ, վեճերի կառավարման ունակություններ, ժամանակի կառավարում:

Հավելված N 3
Հայաստանի Հանրապետության աշխատանքի և
սոցիալական հարցերի նախարարի
2014 թվականի դեկտեմբերի 29-ի N 111-Ա/1 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆ-ՕՐԹՈՊԵԴ /ՎԻՐԱԲՈՒՅԺ/ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժը) քաղաքացիական աշխատանք կատարող է:
2. Վնասվածքաբան-օրթոպեդին (վիրաբույժին) պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի ղեկավարը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժն) անմիջականորեն ենթակա և հաշվետու է Գործակալության պետին:
4. Վնասվածքաբան-օրթոպեդն (վիրաբույժն) իրեն ենթակա աշխատողներ չունի:
5. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժը)՝

   1) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պաշտոնի սույն բնութագրով և աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով) իրեն վերապահված գործառույթները, դրանց շրջանակներում Գործակալության պետի կողմից տրված հանձնարարականները,

   2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, պաշտոնի սույն բնութագրով, աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով) սահմանված պահանջների, իրեն ամրագրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, իրեն վերապահված լիազորությունների

չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման կամ վերազանցման, Գործակալության պետի կողմից տրված հանձնարարականների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

III. ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆ-ՕՐԹՈՊԵԴԻ/ՎԻՐԱԲՈՒՅԺԻ/ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժը)՝

1) Գործակալության պետի հանձնարարությամբ մեթոդական օգնություն է ցուցաբերում Գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներին և վերափորձաքննության բաժնին՝ հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի (այսուհետ՝ ՎԱԾ) կազմման, բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական միջոցառումների տեսակների ու ծավալների որոշման և արդյունավետության գնահատման գործընթացներում,
2) մեթոդական օգնություն է ցուցաբերում պրոթեզաօրթոպեդիկ և վերականգնողական պարագաներ տրամադրող կազմակերպություններին՝ հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրվող պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնողական և տեխնիկական այլ միջոցների տեսակի, ենթատեսակի, անվանման և ծագման ընտրության հարցերում, իսկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ տվյալ կազմակերպությունների հետ Նախարարության կնքած պայմանագրերով սահմանված դեպքերում և կարգով՝ անմիջականորեն մասնակցում դրանց ընտրության և տրամադրման գործընթացին,
3) մասնակցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ստեղծված բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին և իրականացնում է բուժատեխնիկական հանձնաժողովի անդամին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատակարգով վերապահված գործառույթները, այդ թվում՝
   ա. մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորման և օրթեզավորման, պրոթեզի և օրթեզի համապատասխան տեսակի վերաբերյալ եզրակացության կազմմանը,
   բ. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետից շուտ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման անհրաժեշտության վերաբերյալ եզրակացության կազմմանը,
   գ. մասնակցում է պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման գործընթացի հետ կապված վիճահարույց դեպքերում եզրակացության կազմմանը,
4) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց

վերականգնողական միջոցառումների իրականացման նկատմամբ մոնիթորինգի աշխատանքներին,

5) իր իրավասությունների շրջանակներում կարող է ներկայացնել առաջարկություններ վերականգնողական միջոցառումների իրականացման գործընթացի բարելավման ուղղությամբ,
6) իր իրավասությունների շրջանակներում դինամիկ հսկողություն է իրականացնում ՎԱԾ-ով նախատեսված վերականգնողական միջոցառումների իրագործման նկատմամբ,
7) իր լիազորությունների շրջանակներում՝ Գործակալության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցումներ և այլ գրություններ, իր կողմից իրականացման ենթակա գործառույթների հետ կապված կատարում է Գործակալության պետի կողմից տրված այլ հանձնարարությունները,
8) մասնակցում է Գործակալության աշխատանքներից, գործառույթներից և հիմնախնդիրներից բխող նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, մշակման աշխատանքներին,
9) մասնակցում է Գործակալությունում կազմակերպվող սեմինարներին, խորհրդակցություններին և աշխատանքային քննարկումներին, Գործակալության պետի հանձնարարությամբ մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ներկայացնում է առաջարկություններ, զեկուցումներ, հաշվետվություններ և այլն,
10) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժն) ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ, սոցիալական երաշխիքներ և պարտականություններ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժը)՝

1) Գործակալության ներսում շփվում է Գործակալության պետի, Գործակալության պետի տեղակալի, Գործակալության աշխատողների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում,

2) Աշխատակազմի ներսում շփվում է Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում,

3) Աշխատակազմից դուրս, իր աշխատանքային պարտականությունների և գործառույթների հետ կապված շփվում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումն իրականացնող կազմակերպությունների, այլ մարմինների և

կազմակերպությունների պաշտոնատար անձանց և աշխատողների հետ և, որպես ներկայացուցիչ՝ հանդես է գալիս Գործակալության պետի հանձնարարությամբ՝ իր լիազորությունների շրջանակներում:

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժը)՝

1) մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման գործընթացի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին,

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Գործակալության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վնասվածքաբան-օրթոպեդը (վիրաբույժը)՝

1) ունի բարձրագույն բժշկական կրթություն՝ օրթոպեդի կամ վնասվածքաբանի կամ վիրաբույժի որակավորմամբ կամ առողջապահական մասնագիտությունների գծով բարձրագույն կրթություն և օրթոպեդի կամ վնասվածքաբանի կամ վիրաբույժի վերաորակավորում,

2)ունի առնվազն 3 տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ավարտել է կլինիկական օրդինատուրա՝ ստանալով վնասվածքաբանի կամ օրթոպեդի կամ վիրաբույժի որակավորում,

2) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, հաշմանդամների սոցիալական պաշտպանության և բժշկասոցիալական փորձաքննության ոլորտները, վարչական վարույթների և վարչարարության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, իր լիազորությունների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ իրավական ակտերի իմացություն,

3) ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, տիրապետում է սույն պաշտոնի բնութագրով և աշխատանքային պայմանագրով (և/կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով) նախատեսված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հմտությունների և ունակությունների (ցանկ N1), անհրաժեշտ տեղեկատվությանը,

4) տիրապետում է հայերեն լեզվին, կարող է գրավոր և բանավոր կերպով հաղորդակցվել գրական հայերենով,

5) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

ՑԱՆԿ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎՆԱՍՎԱԾՔԱԲԱՆ-ՕՐԹՈՊԵԴ /ՎԻՐԱԲՈՒՅԺ/ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Անհրաժեշտ հմտությունների և ունակությունների տեսակը	Հմտությունների և ունակությունների բնութագիրը
1.	***Անձնական***	միջանձնային բնականոն հարաբերությունների հաստատում, հանդուրժողականություն, համբերատարություն բարյացակամություն, քաղաքավարություն, պարտաճանաչություն, պատասխանատվություն, առողջ դատողություն, սթրեսի կառավարում, աշխատասիրություն, բարեխղճություն
2.	***Գործնական***	թիմային աշխատանք, հաղորդակցություն, ուշադրություն, ճշգրտություն, վերլուծական մտածողություն, տրամաբանություն, տեղեկատվական հոսքերի հետ աշխատանք, աշխատանքային պլանի մշակում, արդյունքների ապահովում, նպատակաուղղված մոտեցում, գրավոր և բանավոր խոսքի տրամաբանական կառուցում, նպատակների սահմանում, առաջնայինի և երկրորդականի տարբերակում, խնդիրների վերլուծություն, գնահատում, սահմանափակ ժամանակի պայմաններում խնդիրների լուծում, որոշումների նախապատրաստում, կայացում, ներկայացման լավ կարողություններ, բանակցային հմտություններ, վեճերի կառավարման ունակություններ, ժամանակի կառավարում:

Հավելված N 4
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 29-ի N 111 - Ա/1 հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ/ԷՐԳՈԹԵՐԱՊԻՍՏ/ ՄԱՍՆԱԳԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ԲՆՈՒԹԱԳԻՐ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ նաև՝ Նախարարություն) աշխատակազմի (այսուհետ՝ Աշխատակազմ) Հայաստանի Հանրապետության բժշկասոցիալական փորձաքննության գործակալության (այսուհետ՝ Գործակալություն) վերականգնողաբանը /էրգոթերապիստ/ (այսուհետ՝ վերականգնողաբան) քաղաքացիական աշխատանք կատարող է:
2. Վերականգնողաբանին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է Աշխատակազմի ղեկավարը:

II. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

3. Վերականգնողաբանն անմիջականորեն ենթակա և հաշվետու է Գործակալության պետին:
4. Վերականգնողաբանն իրեն ենթակա աշխատողներ չունի:
5. Վերականգնողաբանը՝

   1) կատարում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, պաշտոնի սույն բնութագրով և աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով) իրեն վերապահված գործառույթները, դրանց շրջանակներում Գործակալության պետի կողմից տրված հանձնարարականները,

   2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում Հայաստանի Հանրապետության օրենքներով, այլ իրավական ակտերով, պաշտոնի սույն բնութագրով, աշխատանքային պայմանագրով (կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով) սահմանված պահանջների, իրեն ամրագրված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման, իրեն վերապահված լիազորությունների չիրականացման կամ ոչ պատշաճ իրականացման կամ վերազանցման,

Գործակալության պետի կողմից տրված հանձնարարականների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

III. ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6. Վերականգնողաբանը՝
   1) Գործակալության պետի հանձնարարությամբ մեթոդական օգնություն է ցուցաբերում Գործակալության բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներին և վերափորձաքննության բաժնին՝ հաշմանդամություն ունեցող անձի վերականգնողական անհատական ծրագրի կազմման (այսուհետ՝ ՎԱԾ) բժշկական, մասնագիտական և սոցիալական վերականգնողական միջոցառումների տեսակների ու ծավալների որոշման և արդյունավետության գնահատման գործընթացներում,
   2) մեթոդական օգնություն է ցուցաբերում բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովներին հաշմանդամություն ունեցող անձի աշխատանքի պայմանների, բնույթի որոշման և հաշմանդամություն ունեցող անձին համապատասխան աշխատանք կատարելու վերաբերյալ երաշխավորագիր կազմելու գործընթացներում, իսկ անհրաժեշտության դեպքում, Գործակալության պետի հանձնարարությամբ անմիջականորեն մասնակցում է դրա կազմմանը,
   3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով եզրակացություն է տալիս հաշմանդամություն ունեցող անձի աշխատատեղի հարմարեցման վերաբերյալ,
   4) իր իրավասությունների շրջանակներում հաշմանդամություն ունեցող անձանց ցուցաբերում է մասնագիտական օգնություն՝ կենսական առօրյա գործողությունների կատարումը բարելավելու, կյանքի փոփոխություններին հարմարվողականությունը խթանելու, միջավայրային պայմանները հարմարեցնելու նպատակով,
   5) մասնակցում է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի հրամանով ստեղծված բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատանքներին և իրականացնում է բուժատեխնիկական հանձնաժողովի անդամին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, բուժատեխնիկական հանձնաժողովի աշխատակարգով վերապահված գործառույթները, այդ թվում՝
      ա. մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերին և ստորին վերջույթների առաջին անգամ պրոթեզավորման և օրթեզավորման, պրոթեզի և օրթեզի համապատասխան տեսակի վերաբերյալ եզրակացության կազմմանը,
      բ. մասնակցում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամկետից շուտ պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման անհրաժեշտության վերաբերյալ եզրակացության կազմմանը,
      գ. մասնակցում է պրոթեզաօրթոպեդիկ պարագաների, վերականգնման տեխնիկական և այլ օժանդակ միջոցների տրամադրման գործընթացի հետ կապված վիճահարույց դեպքերում եզրակացության կազմմանը,

6) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական միջոցառումների իրականացման նկատմամբ մոնիթորինգի աշխատանքներին,
7) իր իրավասությունների շրջանակներում կարող է ներկայացնել առաջարկություններ վերականգնողական միջոցառումների իրականացման գործընթացի բարելավման ուղղությամբ,
8) իր իրավասությունների շրջանակներում դինամիկ հսկողություն է իրականացնում ՎԱԾ-ով նախատեսված վերականգնողական միջոցառումների իրագործման նկատմամբ,
9) իր լիազորությունների շրջանակներում՝ Գործակալության պետի հանձնարարությամբ նախապատրաստում է առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, զեկուցումներ և այլ գրություններ, իր կողմից իրականացման ենթակա գործառույթների հետ կապված կատարում է Գործակալության պետի կողմից տրված այլ հանձնարարությունները,
10) մասնակցում է Գործակալության աշխատանքներից, գործառույթներից և հիմնախնդիրներից բխող նախագծերի, առաջարկությունների, եզրակացությունների և այլ փաստաթղթերի նախապատրաստման, մշակման աշխատանքներին,
11) մասնակցում է Գործակալությունում կազմակերպվող սեմինարներին, խորհրդակցություններին և աշխատանքային քննարկումներին, Գործակալության պետի հանձնարարությամբ մասնակցում է Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների, միջազգային և այլ կազմակերպությունների իրավասու մարմինների ներկայացուցիչների հետ հանդիպումներին, խորհրդակցություններին, գիտաժողովներին, սեմինարներին, ներկայացնում է առաջարկություններ, զեկուցումներ, հաշվետվություններ և այլն,
12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ իրեն վերապահված այլ լիազորություններ:

7. Վերականգնողաբանն ունի Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ սահմանված այլ իրավունքներ, սոցիալական երաշխիքներ և պարտականություններ:

IV. ՇՓՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆԸ

8. Վերականգնողաբանը՝

1) Գործակալության ներսում շփվում է Գործակալության պետի, Գործակալության պետի տեղակալի, Գործակալության աշխատողների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում,

2) Աշխատակազմի ներսում շփվում է Աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների և աշխատողների հետ՝ իր լիազորությունների շրջանակներում,

3) Աշխատակազմից դուրս, իր աշխատանքային պարտականությունների և գործառույթների հետ կապված շփվում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնումն իրականացնող կազմակերպությունների, այլ մարմինների և

կազմակերպությունների պաշտոնատար անձանց և աշխատողների հետ և, որպես ներկայացուցիչ հանդես է գալիս Գործակալության պետի հանձնարարությամբ՝ իր լիազորությունների շրջանակներում:

V. ԽՆԴԻՐՆԵՐԻ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

9. Վերականգնողաբանը՝

1) մասնակցում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման գործընթացի ռազմավարական և կազմակերպական նշանակության խնդիրների բացահայտմանը, վերլուծմանը և գնահատմանը, ինչպես նաև դրանց ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ տալու աշխատանքներին,

2) բացահայտում, վերլուծում և գնահատում է Գործակալության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է ստեղծագործական և այլընտրանքային լուծումներ:

VI. ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

10. Վերականգնողաբանը՝

1) ունի բարձրագույն կրթություն վերականգնողաբանի մասնագիտությամբ կամ բարձրագույն կրթություն և վերականգնողաբանի որակավորում,

2) ունի վերականգնողաբանի մասնագիտությամբ առնվազն 2 տարվա աշխատանքային ստաժ,

3) ունի Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, հաշմանդամների սոցիալական պաշտպանության և բժշկասոցիալական փորձաքննության ոլորտները, վարչական վարույթների և վարչարարության իրականացման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի, իր լիազորությունների պատշաճ իրականացման համար անհրաժեշտ այլ իրավական ակտերի իմացություն,

4) ունի տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն, տիրապետում է սույն պաշտոնի բնութագրով և աշխատանքային պայմանագրով (և/կամ աշխատանքի ընդունման մասին իրավական ակտով) նախատեսված գործառույթների իրականացման համար անհրաժեշտ հմտությունների և ունակությունների (ցանկ N1), անհրաժեշտ տեղեկատվությանը,

5) տիրապետում է հայերեն լեզվին, կարող է գրավոր և բանավոր կերպով հաղորդակցվել գրական հայերենով,

6) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

ՑԱՆԿ N 1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԲԱՆ /ԷՐԳՈԹԵՐԱՊԻՍՏ/ ՄԱՍՆԱԳԵՏԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Հ/հ	Անհրաժեշտ հմտությունների և ունակությունների տեսակը	Հմտությունների և ունակությունների բնութագիրը
1.	***Անձնական***	միջանձնային բնականոն հարաբերությունների հաստատում, հանդուրժողականություն, համբերատարություն, բարյացակամություն, քաղաքավարություն, պարտաճանաչություն, պատասխանատվություն, առողջ դատողություն, սթրեսի կառավարում, աշխատասիրություն, բարեխղճություն
2.	***Գործնական***	թիմային աշխատանք, հաղորդակցություն, ուշադրություն, ճշգրտություն, վերլուծական մտածողություն, տրամաբանություն, տեղեկատվական հոսքերի հետ աշխատանք, աշխատանքային պլանի մշակում, արդյունքների ապահովում, նպատակաուղղված մոտեցում, գրավոր և բանավոր խոսքի տրամաբանական կառուցում, նպատակների սահմանում, առաջնայինի և երկրորդականի տարբերակում, խնդիրների վերլուծություն, գնահատում, սահմանափակ ժամանակի պայմաններում խնդիրների լուծում, որոշումների նախապատրաստում, կայացում, ներկայացման լավ կարողություններ, բանակցային հմտություններ, վեճերի կառավարման ունակություններ, ժամանակի կառավարում: